

ՆԵՐՍԻՍ ԳԸՀԱՆԵՑ ՀՆՐԹԵՒՅԵԼՆԻ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ
ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ,
— — — — —
ԵԿԵՂԵՑԻՆ
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ.



392

Շ-56

1908

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆ
ՏՊԵՐԸՆ Ս. Յ. ԱԻՆԳԵԼՆԻ


• Нахичевань и-Д.
Типография С. Я. АВАКОВА

392
W
-56

APR 2016

ՆԵՐՍԷՍ ԳՆՀԱՆԱՅ ՀԵՐԹԵՒՑԵԱՆԵՐ.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ
ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ,
—<—>—
ԵԿԵՂԵՑԻՆ
ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ.



1908

ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒՑՆ
ՏԳԱՐԱՆ Ս. Յ. ԱԻԱԳԵԱՆԻ

Нахичевань н-Д.
Типография С. Я. АВАКОВА

1.1 JUN 2013

55.603

Մեծ-Արգոն Գ. ԼԵՕ.

Ձեր ազգային գրականական խոշոր ծառայութիւնը՝ այսօր մի կատարեալ բարոյական պարտք է դրել իւրաքանչիւր հայ մարդու վերայ, ով փոքր է շատէ հասկանում է գրչի ծառայողի քրտնաթոր վիճակը, դալու և շնորհաւորելու Ձեր 25-ամեայ գրական—վիպական, հրապարախօսական և պատմագրական պատկանելի գործը: Խորին յարգանքով սեղմելով Ձեր աշխատաւոր ձեռքը, շնորհաւորում եմ Ձեր կորովի կամքի և փայլուն մտքերի արգասիքը: Մագթում եմ Ձեզ դեռ շատ օրեր ծառայելու այն «անդ ու անդաստանին», որը կոչւում է գիտական—գրական ասպարէզ: Թոյլ տուէք, ամենից յարգուած պ. Յօրեկեար, իմ այս փոքրիկ երկասիրութիւնս նւէր բերելու Ձեր անւան և որպէս շնորհաւորէք Ձեր 25-ամեայ գրական տօնախմբութեան:

Խորին յարգանքով
Ներսէս քահանայ Հերթեցեան.

1908 թ. ապրիլի 22.
Ռոմանովսկի-խուտոր. (Կուբանի գիւղուր. շրջան):



11532-57

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻՆ.

Որովհետև ներկայ քաղաքական պայմաններում Առաքելական-Հայ-Եկեղեցին առելի քան տրամադիր է վերանորոգ կեանքի խնդրով զբաղելու, ուստի ինձ թուում է, որ սոյն երկասիրութիւնս կարող է «ծառայել իբրև նիւթ խորհրդածութեան» պսակի խորհրդի բարեփոխութեան: Այլի քահանաների ցաւալի վիճակից զատ՝ չ'պէտք է մոռացութեան տալ հայ գիւղացի այն կանանցը՝ որոնց ամուսինները պանդխտութեան դիմելով, տարիներ շարունակ բացառապէս են տնից և այդ դեռ բաւական չէ, շատ անգամ ումանք այդ թշուառներից ժամանակաւոր կենակցութիւն են սահմանում հիւժւած կեանքի մնացորդ օտարուհիների հետ՝ և կամ կամաւոր թագստեան դիմելով, թողել են և թողնում են իւրեանց կանանցը, զաւակներին ու ծերունի ծրնողներին թշուառութեան անառակ ծովում: Հարկաւ, արդէն ժամանակն է, որ եկեղեցին կեանքի սօցիոլոգիական պայմաններին հետ համակերպութեան զայ և միևնոյն ժամանակ պիտի հրաժարուի «ց'մահ կենակցելու» խորհրդի կիրառութիւնից:

Եկեղեցին ոչինչ կորցրած չի լինի, եթէ «երեք տարի» ժամանակով հաստատէ կենակցութեան պայմանը, որից յետոյ անհատատարիմ ամուսինները՝ առանց ծախքերի և երկար ու բարակ ձևականութիւնների լուծւած են գլտնում իւրեանց կենակցութեան գործը՝ յայտարարելով այս առթիւ ծխատէր քահանային և պսակազրութեան ժամի վրկաներին, իսկ վերջիններն էլ՝ յայտնում են ի գիտութիւն վիճակային կոնսիստորիայի: Իսկ հաւատարիմ կենակիցներ

ըը վերանորոգում են կրկին 3 տարով խրեանց ուխտը
այտատարելով նոյնպէս ծխատէր քահանային և վկայից
խրեանց որոշումը:

Իմ կէտ նպատակի յայտարարութիւնից առանձին,
հրաժարում ենք մեր այս աշխատութիւնը համարել լրա-
ցուցիչ և ամփոփ գործ, որովհետեւ մենք մեր այժմեան աք-
սորւած վիճակում ոչ մի հնարաւորութիւն և միջոց չունե-
ցանք «եկեղեցական և քաղաքական ամուսնական օրէնք-
ների ժողովածուն» միատեղ՝ առանձին գրքոյկով ի լոյս
ընծայելու: Մօտիկ ապագան գուցէ նպատատւոր հանդիսա-
նայ, այնուհետեւ մենք այն ևս կ'տանք հայ-ընթերցողին,
իբրև լրացուցիչ բաժին ներկայ աշխատութեանս:

Ներսէս քահանայ Հերթեցեան:

1908 թ. 22 ապրիլի.

Ռոմանովսկի-խուտոր (Կուբանի զինւոր. շրջան):

Բ Ա Տ Ի Ն Ա Ռ Ա Չ Ի Ն

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԵՐԻ ԿԵԱՆՔՈՒՄ

ԱՄՈՒՆՈՒԹԻՒՆ.

(Բնական շրջան).

Գ Լ Ո Ւ Խ Ա Ռ Ա Ջ Ի Ն.

(Բովանդակութիւն).

Ամուսնութիւնը՝ բնասօսական, ընկերաբանական, ֆիզիքական և բարոյախօսական մտքով: Զուգակցական կեանքի պատմական ընթացքը: Խմբական կեանք, պետութիւն և կրօնական շրջան: Ամուսնութեան ամենանախնական ձևը. (գետերիզմ): Ծերունիների և էգերի ոչնչացման շրջան: Պօլիանդրա և կնոջ էութիւնը իբրև մօր: Պօլիգամիա և տղամարդու գերիշխանութիւնը: Բաղմակնութեան տարածումը ստորին զարգացման ցեղերի մէջ (Ասիա): Կապակցութեան պաղտնի ձևեր: Ազիւլտերա և կօնկուբինատա:

* * *

Բնախօսական (ֆիզիոլոգիա) մտքով՝ ամուսնութիւնը մի բնական պահանջ է երկու սեռի անձանց համար, ուր առաջի տեղն է բռնում սեռական զգացողութիւնը՝ կամ ցանկութիւնը, միաւորելու և զուակ յարուցանելու համար: Իսկ ընկերաբանական (սոցիոլոգիա) մտքով, նշանակում է կենակցել՝ ժառանգորդներ թողնելու համար:

Ամուսնական կեանքը՝ երկու անհրաժեշտ և լրացուցիչ կողմեր ևս ունի. այն է ֆիզիքական, որը կաղմում է կեանքի տնտեսական մասը և կանգ է առնում զուգաւորւածների փոխադարձ օգնութեան գործի շուրջը. իսկ ըստ բարոյախօսականը՝ կախումն ունի երկու զուգակիցների վե-

րաբերմունքից, որով թէ կինմարդ և թէ տղամարդ բնազդմամբ և բանականութեամբ պիտի ջանք գործ դնեն կատարելութեան գաղափարին մօտենալու՝ և ըստ այնմ առաջ գնալու:

Զուգակցական կեանքը՝ իւր պատմական ընթացքում զարգացման տեսակ-տեսակ նմուշներն է ունեցել:

Դեռ այն նախնական ժամանակներում երբ մարդիկ խմբական կեանք էին վարում, կենակցութիւնը մի որոշ կարգ և սահմանափակում չունէր: Բայց երբ բնական կեանքը տեղի տւեց սահմանափակ օրինական համարւածին, երբ սկսեց հիմնւել պետութիւնը, իւր կրօնական կուլտով և օրէնսդրութեամբ, կենակցութիւնը ենթարկեց որոշ սահմանափակումների թէ կրօնական՝ և թէ պետական օրէնսդրական տեսակէտով:

Հնդկաբանական կեանքը զիտական ձևով ուսումնասիրող անձինք, որպիսիք են Մակլենն, Մօրգան, Լիւբոկ, Պօստ, Ժիրո-Տեօլմա, Սպենսեր և այլք, ցոյց են տալիս, որ կենակցութեան ամենանախնական ձևը եղած է զետեւրիզմ՝ որ նշանակում է խառն ի խուռն, անկարգ և անկանոն սեռական յարաբերութիւն: Համայնական (КОММУНАЛИЗМЪ) խմբական կեանքում, տղամարդ և կնամարդ միմեանց վերաբերմամբ եղած են ազատ: Փոխադարձ պարտականութիւն դէպի միմեանց և դէպի երեսաները չէ եղել. այնպէս որ մի խմբում ծնւած և առաջ եկած երեխաները, համարւում էին այդ նոյն խմբի զաւակներ: Նոքա կերակրւում էին և հասուհանում այդպիսի խմբերում:

Հնդհանրապէս «գետերիզմը» յատուկ է եղել ամենահին, նախնական մարդուն, երբ նա վայրենութեան այն աստիճանում է եղել, ուր տեղի է ունեցել մարդակերութիւնը: Ծնորհիւ ուտեստի պակասութեան, վայրենի մարդը ոչնչացրել է իւր խմբական կազմի մէջ եղած այն անդամներին, որոնք եղած են թոյլ և անպէտք թէ ուտեստ ճարելու գործում և թէ արշաւանքներում: Այդպիսիք եղած են ծերունիները, կինմարդը՝ և երեխաները: Կնոջ ոչնչացման նպաստել է նաև այն հանդամանքը, որ նա նպաստող է

եղել բեղմնաւորութեան և անցողութեան գործին:

Այդպիսով, երբ կանանց թիւը սկսում է որոշ չափով քջանալ, առաջ է գալիս կենակցութեան առանձնացած այն երևոյթը, որով մի քանի տղամարդիկ ընտելանում են ունենալ մի կին: Կնոջ դերը, կնոջ նշանակութիւնը բարձրանում է և նոյն իսկ աչքի է ընկնում: Կենակցութեան այդպիսի մի շրջանում ըստ Բախտլինի՝ սկսում է մի շարք սովորութիւններ, նիստ ու կացի ձևեր՝ և ամուսնական կեանքի ծէսեր: Կնոջ իրաւունքը իբրև մօր՝ տիրող է հանդիսանում և ցեղի ծագումը՝ հաշւելիս են եղել մօր*) անունից: Սա ըստմամարդութեան (полиандра) շրջանն է: Սակայն այլ տեղերում, ուր մի ցեղ աւելի վայրագ է եղել իւր արշաւանքներում միւսի նկատմամբ, իրենց ցեղի կանանց թիւը հաւասարեցնելու համար՝ սկսել են խլել և փախցնել հարևաններից կանանց և աղջիկներին: Փախցըրւած կինը համարւել է մի տեսակ սեփականութիւն փախցնողի, որը սկսել է շատ սակաւ յարաբերութիւն ունենալ իւր ցեղի միւս տղամարդկանց հետ: Իբրև հարձ, իբրև կենակից՝ նա աւելի շատ ծառայութիւն է մատուցել իրեն փախցնողին: Այդպիսով կեանքը հետզհետէ առանձնանալով, բացւել է մի նոր շրջան, երբ կանանց թիւը նորից սկսել է աւելանալ ևս առաւել՝ եթէ շրջապատող բնական պայմանները նպաստել են նորա առատ ապրուստին, սկսել է ըստմանութիւնը: (Полигамия). Այս շրջանում արդէն տղամարդու գերիշխանութիւնը աւելի է աչքի ընկել, որով և նա աստիճանաբար հանդիսացել է իշխող և տէր ու տիրական իւր կնոջը կամ կանանցը:

Բազմակնութիւնը՝ ընդունւած է համարեա բոլոր ստորին զարգացման ցեղերի մէջ. և նոյն իսկ Ասիայի փոքր ի շատէ կուլտուրական ազգերի մէջ, ուր կանանց կեանքը, գոյութիւնը՝ ժամանակաւոր և կամ մշտական կենակցութիւնը՝ կախած է տղամարդկանցից:

Սակայն բազմակնութիւնը՝ որպիսի և ինչ օրէնքների

*) Ժանսօթ. Այժմ այդ կայ հիւսիսային Աֆրիկայի թափառական Բերբեր կամ Տագեր կոչւած ցեղի մէջ: (Հեղինակ).

հիման վերայ որ հաստատուած լինի, դարձեալ նա կ'մնայ հակասող այն բարձր և բարոյական օրէնքներին, որոնցով միայն կարելի է հաւասարութիւն մտցնել երկու սեռի մէջ, չքացնելով նաև այն կենսակցութիւնը, որ կոչուում է «աղիւտերա», այսինքն՝ գաղտնի պոռնկութիւն, «կօնկուրքի-նատա»՝ արձակ կենսակցութիւն առանց պարտաւորութեանց և ապա անատակութիւնը:

* * *

ԳԼՈՒԽ Բ.

Ի Ն Դ Ո Ւ Ս Ն Ե Ր .

(Բովանդակութիւն).

Ամուսնութիւնը ինքուսնների մէջ: Մանուկ օրէնք. ցեղերի նկատմամբ կանանց թիւը: Բրամիներ: Կշատիւներ, վայիսներ և սուղրաներ: Ամուսնացողի տարիքը: Հիմնական պայման պսակի: 8-կարգ պսակներ: Թոյլատրելի և անթոյլատրելի պսակներ ըստ դասակարգի: Պսակալուծումը Մանուկ օրէնքով: Պսակալուծութեան շարժառիթը: Այլ-րիացած կնոջ վիճակը:

* * *

Ինքուսնների մէջ Մանուկ օրէնքով՝ ամուսնութիւնը մի սրբազան պարտականութիւն է, թողած նախորդներից: Առաջի կամ անդրանիկ կինը պէտք է միայն մէկի հետ աղբրի: Կանանց թիւը ըստ ցեղերի այսպէս է որոշուած: Բրամիները*) (ըրմերը) իրաւունք ունին 4 կին ունենալու:

*) Ժամօթութիւն. Բրամիականների մէջ երբ տեղի է ունենում հարսնախօսութիւն զոքա հրաւիրում են «Ասողաբաշխի», որը գուշա-ում է բարին ու չարը և կատարում ընտրութիւնը: Պսակաղբրութեան ծէսը կոչուում է «Սապտապի» — կատարում է 7 պտոյտ անց ու դարձով «օճախի» շուրջը: Բուն ծէսի ժամին, տարիքաւոր կանանցից մինը մօ-

Կշատիւները՝ (զինուորակահերձ) 3 կին: Վայիսները՝ (վաճառական, երկրագործ) 2 կին. իսկ սուղրաները՝ (արհեստաւոր) միայն մէկ կին: Ամուսնացողների տարիքը ընդունուած է այսպէս. երիտասարդ տղային 14, իսկ աղջկանը՝ 7-ը:

Պսակաղբրութեան հիմնական արգելառիթները սոքա են.—

1) Արգելուում է ամուսնութիւնը երկու ցեղակիցների մէջ մինչև վեցերորդ աստիճան:

2) Տան փոքր հասակաւորները իրաւունք չունին մեծերի հերթից առաջ պսակելու:

3) Այն տղամարդը, որը ցանկանում է պսակաղբրել ստորին դասակարգի կնոջ հետ, նա պէտք է մօտաւոր կերպով նշանադրուած լինի բարձր դասակարգի մի կնոջ հետ: Ինքուսնների մէջ ութն կարգի պսակներ կան.

1) Ամուսնութիւն Բրամի:

2) Պսակ ասուածներ:

3) Պսակ սրբերի:

4) Պսակ հրեշտակաց*):

5) Պսակ չար ոգիների (երբ աղջիկը հարս է գնում առանց գիտութեան ծնօղների):

6) Պսակ հսկաների (իգիթների), երբ հարսնացուին իւր ծնօղական տնից զօռով փախցնում են:

8) Պսակ նենգութեան (զիշատչի), երբ մինը պսակ-ւում է այն օրիորդի հետ, որի հետ մեղսական կապեր է սկսել: Առաջի 4 պսակը համարուում է «օրհնեմլ» և այլ-

տենալով պսակաղբրեալներին ձայնում : ո՛ղ այն զոյգը միաւորել տայսլիսի սերով, ինչպէս միացած են «Ռամա և Սիտա» (Ռաման ամե-հասիրելի և այլ մարդկանց խնամող ասուած, իսկ Սիտան՝ քնքշու-թեան և սիրոյ և կանանց հովանաւորող զիցուհի):

Ծնթ. Աշխատասիրող:

*) Ժամօթութիւն. Այս տեղի է ունենում միայն այն ժամին, երբ հարսը իւր ծնօղի կողմից յանձնուում է փեսային. և հայրը կրկնում է ընդունած Փօրմուլան. «Կատարիք մշտական կենսակցութեան «յանձ-նարարած պարտականութիւնները»:

պիսի պսակից առաջ եկած երեխաները լինում են ուսումնական և բաղդաւոր. իսկ միւս մնացած 4-ը՝ համարուում է «ոչ օրհնեալ» և այդպիսի պսակից ծնւածները լինում են անզուլթ և փչացած վարքով:

Քրմական դասին թոյլատրւած էր միայն յիշեալ նախկին պսակներից «վեց կերպի պսակը». իսկ վայրսին և սուղբային՝ բոլոր կերպի պսակը՝ բացառութեամբ 7-րդի: Մանուի օրէնքով, պսակը վերջանում է մահով և կամ պսակալուծութեամբ: Պսակը կարող է լուծել հետեւեալ հանգամանքներում:

1) Հարբեցութեան, 2) կուսաիրութեան, 3) շուայութեան, 4) անբուժելի հիւանդութեան, 5) անպտղաբերութեան 8 տարւայ ընթացքում, 6) փոխադարձ ազանութեան վերաբերմունքից:

Արձակւած կինը՝ իրաւունք չունի մարդու գնալու, մինչև որ նա ապացուցած չ'լինի, որ ինքը Ֆիզիքական յարաբերութիւն չէ ունեցել իւր թողած մարդու հետ:

Այլրիացած կինը ևս իրաւունք չունի նոր մարդու գնալու բացառութեամբ միայն այն դէպքում, երբ մարդու մահը աւելի կանուխ է վրայ հասել, քան կնոջ յղիացումը մեռնող ամուսնուց: Այդպիսի դէպքում՝ այլրիացած կնոջ խնամատարութեան գործը ընկնում է իւր տաղեր վերայ:

Ընդհանրապէս ինդուսների մէջ այլրի կնոջ դրութիւնը և զիրքը խիստ ընկած է: Այլրի կինը պարտական է սըգալ իւր ամուսնու համար նոյն իսկ այն դէպքում, երբ հանգուցեալը կնոջը սիրած չէ եղել: Մի քանի տեղերում հաւատարիմ կինը հետևում է մահացած ամուսնուն իրեն մահւան խարոյկ ձգելով:

Մարդու և կնոջ իրաւանց յարաբերութեան խնդրում, կինը հպատակող է: Գերիշխանութիւնը մարդու կողմն է: Ինչ որ կինը ձեռք է բերել, բոլորը համարուում է սեփականութիւն այր մարդու: Չնայած այս ամենին, ընդհանուր սովորութեամբ պահանջում է այր մարդուց բնքոյշ վերաբերմունք դէպի կինը, դէպի ընտանիքի մայրը:

* * *

ԵԳԻՊՏՈՍ, ԱՍՈՐԵՍՏԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

(Բովանդակութիւն).

Ամուսնութիւնը հին-Եգիպտոսում: Կենակցութեան տիրող ձևը: Քրմերի ամուսնութեան սահմանափակումը: Պսակի արգելման պատճառներ: Մեռածի կենդանի եղբօր պարտականութիւնը՝ դէպի այրի հարսը: Կնոջ պատւաւոր դերը հին-Եգիպտոսում: Իշխող ամուսնական ձևը հին-Ասորեստանում: Հարսնացու ընտրելու տօնական օրեր և առատ հարսանէք, օժիտ: Պսակի նախնական ձևը Պարսկաստանում: Զենդաւեստայի օրինական տեսակէտը՝ անպսակ մնացողների համար:

* * *

Հին-Եգիպտոսում ամուսնական կեանքում տիրող սովորութիւնը՝ բազմակնութիւնն էր: Առաջի կենակիցը՝ համարուում էր մեծ և գլխաւոր միւս երկրորդ և երրորդ ու չորրորդ կանանց:

Քրմերին՝ ըացի մի կնոջից, երկրորդ կին ունենալը և կամ երկրորդ անգամ պսակելը՝ արգելւած է եղել: Ընդհանրապէս պսակի արգելման պատճառները եղած են նախ՝ ուղիղ և նարազատ արիւնակցութեան մօտ աստիճաններ: Իսկ խորդ և հեռու արիւնակից ազգականներին թոյլատրելի է եղել պսակազրութիւնը: Պսակ լուծել կարող էր կենակիցներից մէկի կամ միւսի մահով: Եթէ երկու եղբայրներից մէկը-այն է պսակազրւածը մահանար, կինը մնում էր ամուրի եղբօր խնամքին: Նոյն իսկ այդ ամուրի եղբայրը՝ պարտական էր ամուսնանալու իւր այրի մնացած հարսի հետ, եթէ վերջինս անզաւակ էր: Կնոջից պահանջւում էր բաժինք, որը տանելով համարուում էր իշխող իւր ունեցւածքի վերայ: Հին-Եգիպտոսում կանայք աւելի պատւաւոր դիրք են ունեցել քան հարեան երկրներում:

Հին-Ասորեստանում՝ և կամ բարեխոսուող մէջ ևս դար-

ձեռք բազմակնութիւն: Հարսնախօսութեան կամ աւելի ճիշտը՝ «աղջի ուղեւում» համար կայ եղիլ առանձին տօնական օրերը, ուր հանդէս են բերել հարսնացու աղջկերք և սկըսել է վաճառքի կամ գին դնելու գործը: Գեղեցիկները աւելի առատ և բարձր գին են ստացել, քան միջակները: Եւ ինչպէս փեսայի կողմից առատ տուրք, նոյն չափով ևս հարսնացուից առատ բաժինը:

Հին-Պարսկաստանում Ձենդաւեստայի օրէնքով անպսակ կենալը՝ համարել է խիստ ամօթարեր և արժանի հանդերձեալ կեանքի պատժին: Նախնական ձեռք զուգակցութեան՝ միակնոջով է սկսուել թէ՛ թոյլատրւած է եղել նաև, «հարճեր» պահելը: Թոյլատրելի էր և է ամուսնութիւնը խորդ եղբայրներին՝ խորդ քոյրերի հետ (chebuda):

* * *

ԳԼՈՒԽ Դ.

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ԵԱԳՈՆԻԱ.

(Բուլանդակութիւն)

Չինաստանում Բուլդայի օրէնքը՝ պսակի նկատմամբ: Չինացիների կարծիքը կնոջ մասին: Էգերի ոչնչացումն: Կինը իրրև քմահաճոյք: Ամուսնացող օրիորդը կամք չունի: Ամուսնութիւնը երբ համարուում է լուծւած: «Բէշիկ-Քեարթմայի» սովորութիւն: Օտար ցեղերի հետ խառնելու արգելք:

Նապոնիա — Պսակազրութիւնը որպէս մասնաւոր գործ. կառավարութեան միջամտութիւնը: Դախիօսի (ազնւականներ) և կուզէմներ (ատտիճանաւորներ) արտօնութիւնը ամուսնական խնդրում: Նշանադրութեան նախնական ձեռք: Տղայի և օրիորդի տարիքը: Օժիտ և հարսանեկան սովորութիւններ: Սակի և կամ օղիի գործածութիւնը նորապսակեալների մէջ: Օրիորդի դրութիւնը Նապոնիայում ամուսնութիւնից առաջ: Կնոջ վիճակը: Ատամների սկացնել: Պարզ կենցաղ: Պսակի արգելման 6 ձևեր: 1873 և 74 թ. պետական օրէնքը կնոջ մասին:

* * *

Չինացին Բուլդայի օրէնքի համեմատ պսակի վերայ նայել է և նայում է որպէս մի միջոցի՝ յատկապէս զաւակ ունենալու համար: Դոցա կարծիքով՝ «կինը հոգի չունի»՝ ուստի եբբ էգ զաւակ է ծնում, չինացիք խիստ տրտմում են: Հսումը՝ էգ երեխաներին սպանելիս են եղել և այդ բացառում է չինացու դէպի էգերը տածած խիստ արհամարանքից: Չինաստանում կինը ենթակայ է ամենաթշուառ վիճակի: Նորան անխնայ կարելի է ծեծել, տնից դուրս անել և նոյն իսկ սպանել և շատ անգամ փոխ տալ ուրիշին կնութիւն անելու՝ նոյն իսկ հակառակ կնոջ կամքի: Ամուսնութիւնը աւելի կրօնական բնոյթ ունի և նա լուծել կարելի է նաև օրէնքով: Խորհուրդը կատարւած է համարուում, երբ հարս ու փեսայ պսակազրութեան մի բաժակից օղի կամ տնային պատրաստած խմիչք փոխ առ փոխ խմում են: Պսակն արգելում է 1) — Ցեղակիցներին, որոնք կրում մի ազգանուն: 2) — Եղբայրներին քոյրերի հետ: 3) — Այն սյրիացածի տղային միւս սյրիացած աղջկայ հետ, որի վերայ պսակել է՝ և կամ պիտի պսակել ամուսնացողներից մէկի կամ միւսի հայրը:

3) — Մանդարինին այն օրիորդի հետ, որոց մօտ երիտասարդը ծառայել է:

5) — Ստրուկին՝ ազատի հետ:

6) — Այն զաւակներին, որոնք իրենց հօր և կամ մօտ ազգականների մահւան պատճառով սզի մէջ են երեք տարի ժամանակով և ապա նոցա, որոց հարազատները գտնուում են բանդերում:

7) — Սյրիացածներին՝ մինչև սզի լրացնելը:

Կանայք չունին և ոչ մի սեփականութիւն ու իրաւունք: «Բէշիկ-Քեարթմայի» (օրօրօցում իսկ նշանադրել) սովորութիւնը Չինաստանում ևս կայ պահւած: Օտար ազգերի հետ խառնելը՝ խիստ արգելւած է:

Նապոնիայում պսակի վերայ նայում են որպէս մի մասնաւոր գործի: Կառավարութիւնը մասնակցում է զրանում այնքան, որքան նրա շահն է պահանջում գիտնալ տձեցողների և պսակողների բնակարանը:

11532-57



Յապոնիան ֆեոդալական ձևի շնորհիւ, որոշ դասա-
կարգեր, ինչպէս ազնւականներ՝ (դաիմիօսի) և աստիճա-
նաւորներ (կուզեսի), կառավարութեան առանձին ուշա-
դրութիւնից օգուտում են:

Վերոյիշեալներէց ոչ ոք իրաւունք չունի ամուսնական
կապ կնքել առանց կեդրոնական կառավարութեան թոյլ-
տուութեան: Այն իսկ հասարակներին տրւած է կատարեալ
ազատութիւն պատկազրութեան նկատմամբ:

Նշանադրութիւնը սկսում է միջնորդներով: Տղայի
տարիքը 20, իսկ օրիորդինը՝ 16: Ազգաւոր դասակարգում
տղան 24 տարին լրացնելուց յետոյ պատկուտ է: Պսակա-
դրութեան օրը՝ նախ տանում են հարսի օժիտը: Փեսայի
տունը զարդարում են երկու խնամիկների տներէց հաւաքած
աստուածների պատկերներով: Կապում են սեղան և ծածկում
են ծաղիկներով: Դնում են նոյնպէս ջրային աւազան կամ
բոյսերի և կամ ծաղիկներով լեցուն: Շարում են լաքած
աթոռներ և եղևիներ և նախնական մարդոց (Ադամի և
Եւայի) նկարները շրջապատելով այն կռնկան և կրկայի
նկարներով, և այս համարում է նշան երկար կեանքի: Բե-
րում են փաթաթանի մէջ դրած չորացրած ընծաներ, այն
է. չորացրած ձուկ, կտակաստ, ծովային եղինջ (крапива)
և օղի: Այս ամենը որոշ չափաւորութեամբ յիշեցնելու է
նորապսակեալներին նախահարց հասարակ կենցաղի մասին:
Կէս օրին ուղարկում են հարսի ետեից և նա մտնում է
փեսայի տունը սպիտակ հանդերձով և սաւանով ծածկւած:
Հարսի ընկերուհիք և ազգականները հազնում են ծիրանի
և գոյնզգոյն շորեր: Երբ հարսը ընթանում է, նրա երկու
կողմն անցնում են ընկերուհիք: Ծաղկերոյթի ժամին հար-
սանիքի հրաւիրւած օրիորդները սկսում են թեթեռնիկի
սման ճախրել, պտոյտներ գործել և այդ խաղի մէջ է կա-
յանում ամուսինների բաղդաւորութիւնը: Պսակադրութեան
խորհրդի էութիւնը ինչպէս Ձինաստանում, նոյնպէս և Եա-
պոնիայում կատարւում է այն ժամին, երբ զուգաւորուող
նորասիք ընդունում են ըմպելիք: Մատուցանողները լի-
նում են հարսի ընկերուհիք: Նորապսակեալները ծնկի գա-

լով հերթական կարգով մինչի վերջին կաթիլը՝ ըմպում են
օղի կամ սաքի:

Օրիորդի դրութիւնը Եապոնիայում աւելի ազատ է,
քան Ասիայի ազգերի մէջ: Երբ օրիորդը մարդու է գնում,
նա պարտական չէ հաշիւ տալու իւր ամուսնուն իւր ան-
ցեալի մասին: Բայց ամուսնանալուց յետոյ, եապոնուհին
տեղիք չտալու գայթակղութեան, նախ ածելում է ունքերը,
աշխատում է սև վերարկու ծածկել և որ գլխաւորն է օղիի
և երկաթի փոշու խառնուրդով սևացնում է ստամբերը:
Կասկածատուութեան պատճառով մարդը կարող է արտաքսել
իւր կնոջը և կամ խիստ ծանր պատիժ տալ: Բազմակնու-
թիւնը օրէնքով թոյլատրւած է: Եապոնուհիք շնորհիւ տե-
ղական ընդունւած կարգերի, այնքան պարզ են, որ մարդ
զարմանալ կարող է թէ ինչպէս դոքա օր ցերեկով ազա-
մայ մերկութեամբ փողոցներում լողանում են տաքացրած
ջրով:

Մինչև 1874 թ. Եապոնիայում կար այն օրէնքը, որ
մարդը կարող էր կնոջը առանց մի կողմէկի ապահովութեան
խսկոյն արձակել և դուրս անել: Սակայն 1874 թ. յունվարի
4-ին դուրս եկան հրովարտակներ, որով իւրաքանչիւր ա-
մուսնացող այնուհետև պարտական էր հարցնելու կառավա-
րութեան համաձայնութիւնը: 1873 թ. մայիսի 15-ին,
դրեցաւ օրէնք, որով մարդը այլ ևս իրաւունք չունէր
կնոջը իւր կամքի հակառակ բռնի պահելու կամ արտաք-
սելու. այդ լինելու էր միմիայն դատարանի միջոցով և ղե-
կավարութեամբ:

* * *

ԳԼՈՒԽ Ե.

Գ Ի Ն - Գ Ր Է Ս Ն Ե Ր

(Բովանդակութիւն).

Ամուսնութիւնը հին-հրէաների մէջ ըստ մովսիսա-
կան օրէնքի: Պսակադրութեան ձևեր և զարդեր: Պսակի
սովորութիւնը տագեր հետ, ոտներ հանելու սովորութիւն

— դատաւորների ներկայութեամբ մովսիսական օրէնքի համեմատ: Չամուսնացողների մասին կարծիք: Գերշումաբէն—իբզուտի: Ամուսնալուծութեան շարժառիթներ: Մօբաքըրոջ և քեռ որդոց ամուսնութիւն: Կարախիմներ: Այրիպացած կնոջ վիճակը կրկնակի ամուսնական գործում: Արգելք այլադաւաններին աղջիկ տալու: Պարտաւորուած պսակ: Պսակի ձևը: Վկաներ: Գինի խմելու սովորութիւն:

* * *

Հին-հրէաների մէջ մովսիսական օրէնքով բազմակնութիւնը՝ ձևականօրէն արգելուած չէր և կանանց թիւը որոշուած էր սղամարդու կարողութեան չափ: Պսակադրութիւնը համարուում էր ընտանիքի սրբազան պարտականութիւն: Պսակադրութեան խնճոյքը և հանդէսը տեւում էր 7 օր, որից յետոյ հարսնացուն լւացած, անուշահոտ իւղերով օժուած և իւր դրութեան վայել ճոխ հագուստով զարդարուած, գլխին պսակ դրած, (kalle) փեսայի հետ միատեղ մտնում էին հովանոցի (балдахинъ) ներքոյ և շրջապատուած հրաւիրեալներով, ծնօղ բարեկամներով գնում էին ամուսնու տունը, որի դրան մօտ երաժիշտները և լապտերակիրները վառած մոմերով սպասում էին փեսայի դաստեան:

Հին-խորայելացիք եգիպտացիներից վերցրած մի յայտնի սովորութիւն են պահել: Երբ այրի մնացած հարսը զաւակ չէ ունեցել և կամ ունեցած է մի զաւակ միայն և յանկարծ իւր գլխաւորը մահացել է, այդ դէպքում տագըրը պէտք է իբրև կին խնամէր և տպրէր իւր այրի հարսի հետ: Բայց եթէ տագըրը չցանկանար այն, այդ դէպքում հարսը իրաւունք ունէր ուրիշին կնութեան գնալու, նախապէս կատարելով սոսներ հանելու սովորութիւնը) (халица или разувания—chaliza), որի ձևական մասը հետեւեալն էր: Այրի հարսը դատաւորի և վկաների ներկայութեամբ հանում էր տագեր սոսնամանը և թքնում էր նորա երեսին: Յրանով վերջանում էր վերոյիշեալների ազգականութեան կապը:

Մովսիսական օրէնքը վերջերքս զգալի փոփոխութեան է ենթարկուել մի քանի ռավվիներէ որոշմամբ. ուստի և ներկայ ժամանակի պսակադրութեան օրէնքը կոչուում է «մովսիսական—ռավվիական օրէնք», որի զօրութեամբ պսակադրութիւնը է երկու զուգակիցների դաշնակցութիւն, որով իւրաքանչիւր ամուսին ընկեր՝ կեանքի պէս պէս հանգամանքներում միմեանց պիտի օգնեն, սիրեն և հաւատարիմ մնան ու փոխադարձաբար կատարեն Մովսիսից առաջադրուած պատգամները: (Ke-dat Moche ve Izrail):

Հրէա ընտանիքի իրաւունքների ժողովածուի մէջ, որը կրում է «эбен-га-эберъ» անունը, պսակադրութիւնը համարուում է հասարակական և կրօնական պարտականութիւն. իսկ չամուսնացողները համարուում են յանցաւոր մարդասպանութեան չափ: Բազմակնութիւնը XI-րդ դարում Վօրմնի ժողովում, նախագահութեամբ Գերշումայի և այլ ռավվիների, արգելուեց յատուկ նշովքով, որը կոչուեց Գերշումաքեն—իբզուտի (նշովք Գերշումայի): Պսակուելու գործում, հրէական օրէնքը ճանաչում է ազատ կամք և արբուն հասակ, որ օրիորդի համար ընդունում են 13 տարին, իսկ տղայինը՝ 16:

Պսակը լուծուում է ամուսնական անընդունակութեամբ: (Ղևտական՝ գիրք Գ-րդ, գլ. XVIII-րդ, յ. 7—17): Հրէական օրէնքով, մօրաքրոջ և քեռ որդիքը կարող են ամուսնանալ: Երկու եղբայր փեսայ կարող են դառնալ երկու քոյր հարսնացունների և վերջապէս առաջայ պսակից եղած երեխաները՝ երկրորդ ամուսնութիւնից եղած քոյրերի հետ ևս կարեն ամուսնանալ:

Կարախիմների մէջ բաժանուած կինը երբ կրկին ամուսնանայ և կրկին այրիանայ, ըստ Թալմուտի նա իրաւունք չունի վերստին ամուսնանալու: Այլադաւաններին արգելում է աղջիկ տալ, չնայած որ ներկայ պայմաններում բոլորովին ճշտիւ չի պահուած օրէնքը: Հնումն, Թալմուտականների մէջ, կամ գրաւոր կապակցութեամբ և կամ փողի միջոցով կարելի էր պսակել: Այն ամուրի երիտասարդը, որ թոյլ էր տւել իրեն կենակցելու մի օրիորդի

հետ, նա պարտաւոր էր պսակադրուելու վերջինիս հետ: Այժմ պսակը կատարուում է ռավվիններէ ձեռքով, ուր ներկայ են լինելու 10 հասակաւոր անձինք (minian), որոց ներկայութեամբ նախ կարդացուում է երկու օրհնութիւն պսակի և 7 օրհնութիւն պսակից յետոյ: Այնուհետև նորապսակները հովանոցի ներքոյ մտնելով լսում են պսակի պայմանը:

(Kethuba) փեսացուն հարսնացւին հագցնում է մատանի՝ և երկուսին էլ տրուում է գինի փոխ առ փոխ մի բաժակ մաքուր խմելու:

* * *

ԳԼՈՒԽ Զ.

ՄԱՅՄԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՂՈՒՐԱՆ.

(Բովանդակութիւն).

Պսակադրութիւնը մահմետականաց մէջ: Բազմակնութիւնը ըստ Ղուրանի: Պսակի իրագործումը անքնական պայմաններում: Պսակի արգելման պատճառներ: Պսակադիր դատին և կենակիցների փոխադարձ յարաբերութեան սահմանը: Անհնազանդ և անհաւատարիմ կնոջ պատիժը: Ամուսնական խնդրում բարոյական խորհրդի բացակայութիւն:

* * *

Մահմետական ազգերի մէջ տիրում է բազմակնութիւն, որը թոյլ է տրւած Ղուրանով: (Տես IV-րդ, սուրա յ. 3), բայց և օրինական կանանց թիւը սահմանափակած է չորս կանանցով և բացի դրանից պսակի համար որոշած է ժամանակ: Սովորական յարաբերութիւնը հարճերի հետ՝ և այն համարուում է պսակ: Սակայն միջին և հասարակ ընտանիքներում տիրում է միակնութեան գաղափարը, որը աւելի նպաստում է ընտանիքի թէ տնտեսական բարւոք վիճակին և թէ խաղաղ կացութեան: Հարսնացու ընտրւող ազնկայ տարիքի թէ փոքրութիւնը և թէ նոյն իսկ հոգեկան

տկարութիւնը՝ պսակելու արգելադրութիւնը չեն կարող և այդպիսի դէպքերում պսակը կարող է իրագործուել խնամակալների (опекуны) և հոգաբարձուների միջնցաւ: Իսկ ինչ վերաբերում է ցեղակցութեան, Ղուրանով արգելում է նախ չամուսնանալ այն կնոջ հետ, որի հետ ամուսնացել է հայրը: Արգելում է նաև ամուսնանալ մօրաքոյրի, հօրաքոյրի և զոքումջի հետ: Պսակի կարգը կատարում է դատին և հրաւիրում վկաներ, սրտնց ներկայութեամբ և կարդացուում է պսակի և կենակցութեան պայմանը:

Կենակիցների փոխադարձ յարաբերութիւնը, որոշում է հետևեալ կարգով: Տղամարդ ամուսին պարտական է կենակցել ապրելու մտքով օրինաւոր համարւած չորս կանանց հետ, բայց նոցա հետ սեռական յարաբերութիւն կարող է չունենալ, թէև նոցա ապրուստի լի ուլի միջոցները ինքն է հոգալու: Կինը պարտական է հպատակելու մարդու բոլոր ցանկութեանց առաջ և պէտք է այնքան զգոյշ լինի, որ չ'շարժէ իւր էրկան զայրոյթը: Անհնազանդութեան դէպքում, մարդը կարող է պատժել կնոջ «ծեծելով», բայց պէտք է զգոյշ լինի, որ արիւն հանել չ'լինի և կամ մարմինը կապոյտի հետքեր ունենալու չէ:

Խուլ անկիւններում, եթէ կինը բռնեց անհաւատարմութեան գործում, նորան դնում են մի մեծ պարկի մէջ և մի բարձր տեղից գլորում են վայր և շատ տեղերում էջի վերայ թարս նստացնում են անառակ կնոջը: Կայքերի և ունեցածքի մասին եղած երկու ամուսիններու իրաւունքները նախատեսուում են պսակի պայմանում: Ընդհանրապէս մուսուլմանների աջքում կինը չի եղել և չէ հաւասար ընկեր իւր մարդուն:

Ամուսնութեան ինքրում բարոյական գաղափարի բացակայութեան պատճառով՝ կինը ծառայում է որպէս հաճոյք սեռական բաւականութեան և դրա համար է հարեմը իւր փականքներով և խեղտող կիւնքով:

* * *

ԳԼՈՒԽ Է.

ԳԻՆ-ՅՈՒՆՍՍՏԱՆ.

(Բովանդակութիւն).

Կնոջ դրութիւնը հնու մն Յունաստանում: Կեկրոպսիայի ժամանակ: Պսակը քաղաքական իշխանութեան հոգածութեան խնդիր: Աթէնքի բնակիչների անբարոյականութեան շրջան: Անպատկանների համար կայսերց դրած սահմանափակումներ: Պետական որոշում՝ որք մնացած օրիորդների օժիտի մասին: Գամելիօն. Պսակի օրինաւոր լինելը:

* * *

Հին-Յունաստանում՝ քանի դեռ ժողովուրդը տգէտ դրութեան ներքոյ էր, կնոջ դրութիւնը նոյնն է եղել ինչ որ Արևելքում (Պարսկաստան և Թուրքիա): Բայց աստիճանաբար զարգացման ընթացքում՝ առաջ եկաւ միակնութեան օրէնք (Կեկրոպսիայի ժամանակ): Բոլոր ժամանակ՝ հին Յունաստանում՝ պսակը հանդիսանում էր որպէս քաղաքական հաստատութեան իրաւունք և հէնց դրա համար էլ կայսրները քաղաքացիներից նշանակում էին անձնաւորութեանց, որոց պարտականութիւնն էր հսկել ընտանիքի միաբանութեան վերայ: Այդպիսի դէպքում խօսք անգամ լինել կարող չէ ամուսինների բարոյական անձնւորութեան նկատմամբ: Այն շրջանում, երբ Յունաստանում սկսեց ծաղկել քաղաքակրթութիւնը՝ Աթէնքի և միւս քաղաքների քաղաքացուհիք դեռ շատ յետ էին մնացել և չէին կարող իրենց ամուսինների հետ առաջ ընթանալ: Առաջ եկաւ մի նոր հակում, որով խոյս էին տալիս օրինաւոր ամուսնութիւնից: Սիրեկան և սիրուհի ունենալը ամենամեծ չափերի հասաւ: Այդ ժամանակ կայսրութիւնը պահանջ զգաց մի կողմից որոշել մի քանի սահմանափակումներ անպատկանների համար՝ և թէ նրանց, որոնք ուշ էին կամենում պսակել: Առաջադրեցան որք մնացած օրիորդների հարազատներին կամ մօտ ցեղակիցներին վերոյիշեալների համար օժիտ

պատրաստելու, որպէս զի նոքա դրանով հեշտութեամբ կարենային մարդու գնալ:

Աթէնքում պսակից առաջ կատարւում էր նշանադրութիւնը այն մարդու ձեռքով, որի խնամքի ներքոյ ապրելիս է եղել հարսնացուն: Եւ եթէ այդպիսին չ'լինէր, այն ժամանակ կատարւում էր «պաշտօնական անձանց» միջոցով:

Պսակը մեծաւ մասամբ կատարւում էր ձմրան, որի պատճառով ձմրան ամիսներից մինը անւանւում էր «գամելիօն»:

Պսակը օրինաւոր էր, եթէ ամուսնացողները համարւում էին քաղաքացիներ. իսկ արգելաւիթ պսակի համարւում էր «հարազատ և մօտ արիւնակցութիւնը»:

Կողմնակի ազգականներին որ աստիճանումն էլ լինէին, պսակը թոյլատրելի էր:

* * *

ԳԼՈՒԽ Ը.

ԳՐՈՎՍԸ.

(Բովանդակութիւն).

Գետերիզմը Հռովմում—յատին և ումբրօ սարխնական ցեղերի մէջ: Ֆիւստել Դեկուլանժ, նորա կարծիքը՝ հին-հռովմէական ընտանիքի և սիրոյ մասին: Պսակի վերապահումը քաղաքական հաստատութեանց: Կօնկուբինատ: Բնական զաւակներ և նոցա տարբերութիւնը օրէնքի ներքոյ գտնւած կենակիցների զաւակներից: Կոստանդին կայսրը և իւր տւած արտօնութիւնը բնական կարգով սերւածների մասին: Յուստիանոս կայսրի տւած իրաւունքը—կօնտուբերնում: Ստրուկ երեխաներ՝ ազատ կնոջից: Սենատօրներն ամուսնութեանց վերաբերմամբ սահմանափակումներ: Նշանդրէքի մատանիք տալու սովորութիւն: Պսակողներն տարիքը: Պսակի հին ձեւ՝ ընտանիքի իշխանութեան որոշմամբ: Կօնֆարեպիա: Կօն-ֆար-ֆար: Կօնմպցիա: Ամուսնութեան հասարակ ձեւը օտարուհիների և ոչ զարգացածների մէջ: Կենակցութեան պարզութիւնը Հին-Հռովմում: Կնոջ

դերը: Սպանութիւն առանց պատժի: Կայսերց դարեչըջանում պսակի կարգաւորութիւնը: Սենեկայի վկայութիւնը կանանց տարեգլխի մասին: Կօնֆարեացայի անհետանալը: Քրիստոնէութեան մուտ գործելը և կօէմպցիայի ընկնելը: Կենակցութեան նոր ձև, կնոջ իրաւունքը: Պսակի ընդհանրացումը Յուստիանոս կայսրի օրով: Պսակ, միջին, յետին և բարձր դասակարգի մարդկանց համար: Պսակը կրօնական ծէս IX-րդ դարում:

Լև իմաստասէր: Իրաւագէտ Մօսեստին և նորա պատմական խօսքերը պսակի նկատմամբ:

* * *

Հոովմում՝ նրա շրջապատող լաթին և ումբրօ սաբինական ցեղերի մէջ սկզբնորում տիրել է գետերիզով՝ (անորոշ և անկանոն կենակցութիւն): Նոյն իսկ մինչև մեր օրերը հասել է մի ասացածք, այն է՝ «lusco modo dotem quaerere» այսինքն ձեռք բերել օժիտ՝ անառակութեան միջոցով: Մի քանի գիտնականների կարծիքով, ինչպէս նաև Փիլաստել Դեկուլանտ, հին-հռոմէական ընտանիքի սիրոյ և անքակտելի միութեան կապը եղել է նախնիքների պաշտաման գուտ կրօնական խորհրդաւորութիւնը, քան արիւնակցական կապերը: Սակայն երբ կրօնական ընտանեկան այդ խորհրդաւորութիւնը, որ արտայայտել է կօնֆարրիացիի ձևով (և այդ կ'պարզւի յետագայ տողերում) տեղի է տալիս իրաւագիտական-քաղաքացիականին, պսակը վերապահուում է քաղաքական հաստատութեանց իրաւունքին, ահա այդ երկու դրութեանց ներքոյ՝ ամուսնութիւնը մնում է Ֆիզիքսական (մարմնական) երևոյթ. այն է, զաւակներ յարուցանել, որպէս զի նախորդների դաւանանքը շարունակելի և պետութեան կազմը պաշտպանելի: Այդպիսի հայեացք ամուսնութեան վերաբերմամբ, այսինքն միմիայն զաւակներ յարուցանել, յայտնի կերպով արտայայտուած է Սերվիոս Տուլլոսի ժամանակ ամուսնիների և անժառանգների համար սահմանած Փօրմուլայում (liberum procreandum causa):

Կար նաև ամեն տեսակ արտօնութիւն ամուսնութիւն կապողների համար: Այդ ժամանակ կինը երևում է առանց մի որ և է իրաւանց և շարունակ կախումն ունեցող իւր ամուսնուց: Օրինական պսակի հակառակ կար երկու ձև ամուսնութիւն: 1) Կօնկուքինատ և 2) Կոնտուքերնում: Կօնկուքինատ սահմանուած էր Օգոստոս կայսրից որպէս զի օրինական կենակցողների թիւը աւելանայ և հետզհետէ քսանայ ապօրինի կանանց վերայ ծախւելիք ծախքերը և թեթևութիւն լինի ամուսնացողների ապրուստի: Սակայն և այնպէս այս նոր օրէնքում լի ուլի կերպով չ'կար այն արտօնութիւնները ինչ կար կանոնաւոր ամուսնացածների վերաբերմամբ եղած օրէնքում: Այստեղ կինը չէր ենթարկուում մարդու իշխանութեան և ունեցած զաւակներին համարում էին ընական (liberi naturales) և վերջիններիս իրաւանց տարբերութիւնը օրինաւոր համարւածներից այն էր, որ բնական զաւակները իրաւունք չունէին հայրական ժառանգութեան տիրող լինել. թէև կարող էին խնդրել միմիայն ապրուստի միջոց: Կոնստանդին կայսրը թոյլ տւեց ընական կոչւածներին ևս ճանաչել օրինաւոր՝ եթէ ծնողները օրինաւոր ամուսնութեան կարգերին կ'հետևէին և կընդունէին այն: Յուստիանոս կայսրը տւեց այդպիսիներին դեռ ծնողական ժառանգութեան մի որոշ մասին տէր լինելու, այն է՝ 1/6-րդական բաժինն առնելու:

Կօնտուքերնում (contubernium) նշանակում է կատարեալ անհոգ յարաբերութիւն այր ամուսինների, որոնք ոչ մի պարտականութիւն չունէին դէպի միմեանց և դէպի զաւակները:

Սա միակ հանդուրժելի օրէնքն էր թէ ստրուկների համար՝ և ապա ազատների՝ դէպի ստրուկները:

Վերոթեալ ամուսնութեանց համար որոշուած է եղել, որ ազատ կինը՝ որը կամենում է ստրուկի հետ ամուսնանալ, ստրուկին տիրողի համաձայնութեամբ նա կարող էր պայման դնել այս կամ այն հարցի նկատմամբ: Ստրուկի կինը իւր կոչմամբ նա թէև մնում էր ազատ, բայց եղած երեխաները համարում էին հօր պատճառով ստրուկներ:

Օրինական համարած ամուսնութիւնը սկսում էր հանդիսաւոր նշանադրութեամբ, որը ունէր առանձին պայման և որի հիման վերայ փեսացուն տալիս էր հարսնացուին նշանադրութեան ժամի մատանի (Annulus-pronubus), որը ծառայում էր որպէս գրաւական պակադրութեան պայմանի (arra sponsa licia): Յիշեալ օրէնքի հիման վերայ պահւող տղայի տարիքը լինելու էր 14, իսկ աղջկանը՝ 12: Օրինական արգելաօրէի ամուսնանալու համարում էր ուղիղ արնական մերձաւորութիւնը, ազգականութեան 4-րդ աստիճանը և սգի ժամանակի լրացումը, որ ընդունւած էր պահել 2 տարի առաջի մարդու մահւան պատճառով՝ իսկ երկրորդ մարդու՝ 1 տարի: Արգելաօրէի էին համարւում դասակարգային և դաւանական տարբերութիւնները. օրինակ՝ սենատորներին կամաթողներին հետ և կամ ակտորիսաններին: Ազատներին անառակներին հետ և հրէաներին քրիստոնեաներին հետ:

Հին-Հռոմում, դեռ կանուխ ժամանակներում, ընտանիքի իշխանութեամբ և որոշումով և կրօնական արարողութեամբ՝ երեք տեսակ ձև կամ միջոց է եղել օրինական ամուսնութեան.—

1) *Կոնֆարրատիո*, (confarreatio), որը կրօնական ծիսական արարողութեան մի շարք է: Երբ աղջկան նշանադրում են և մօտենում է վերջնիս օրերը, որով նա պիտի բաժանւի ծնօղներից և գնա մարդու, նրան նախ մեկուսացնում էին իւր ծնօղական յարկի տակ եղած աստւածապաշտական ծիսակատարութիւններից և յանձնում էին փեսացւի ծնօղների ընտանիքի կրօնական պաշտաման: Այնուհետև երբ սկսում էր հարսանիքի հանդէսը, երգելով դիմում էին դէպի փեսայի տունը և այդ օրհներգը ներկած էր Գեմենին (բաղաւորութեան մեծ Աստածը): Այնտեղ կամ ծայրագոյն քուրմը (Pontifex Mazimes) և կամ Ռալիտների քրմի (Flamendialis) ու 10 վկաների և զարուսպիկների (կանխազուշակների) առաջ սկսում էր գոհաբերութիւնը: Բերում էին ոչխարին, նախ երգելով ձակձկում էին անասունին և ապա մորթելուց յետոյ մորթին հանում և

փռում էին հարսի և փեսայի համար որոշած յատուկ տեղի վերայ: Երբ փեսան և հարսը բազմում էին, ծածկելով սոցա գլուխները՝ մատուցանում էին նորապսակեալներին միատեղ ուտելու ցորեն-հաց: Սա լինելու էր նշան պակադրեալների անբաժան միութեան և սիրոյ. ուստի դրա համար հարսնացուն հանդիսաւոր կերպով արտայայտում էր հետեւեալ Փօրմուլան «Այ հայեա, որտեղ դու՝ այնտեղ էլ ես», որից յետոյ նա համարւում էր իւր ամուսնու ընտանեկան պաշտաման անբաժան անդամ:

Պակադրութեան այդ հացի հետ խառնում էին կամ աղ՝ և կամ միջոց: Պակադրութեան ժամին վերցնում էին հետները և ջուր և կրակ:

Փեսայի և հարսի միատեղ ուտելը կոչւում է «կօմֆարֆար»:

2) *Կօէմպցիա*՝ (Coemptio), որը կայանում էր կնոջ կողմից մարդուն տւած բաժինքի և կամ օժիտի քանակութեան մէջ: Այդ ժամին ընդունւած էր կոչել 5 վկաների (testes), որոնք ներկայանում էին որպէս ամբողջ Հռոմի ազգաբնակչութեան ներկայացուցիչներ և կշեռքապաններ, (ВѢСОВШИКИ), որովհետև բոլոր ակտը կատարւում էր օժիտի գումարի հաշին և կամ տարած իրերի քաշին:

3) *Ուզու*՝ այդ այն հին ժամանակներից Ֆուսցած ձևն է ամուսնութեան, որ երբ տղամարդ և կինմարդ մի տարի շարունակ ամուսնական կեանք կապեցին, այնուհետև նոցա կենակցութիւնը համարւում էր օրինաւոր ամուսնութիւն:

Իսկ եթէ կենակցութեան ընթացքում ամուսիններից մէկն ու մէկը երեք դիշեր բացակայէր իրենց բնակչութեան տեղից, կենակցութիւնը դրանով կորցնում էր իւր յարատեւութիւնը և այդպիսին զրկւում էր ընտանեկան տան տէր լինելու իրաւունքից:

Ամուսնութիւնը Հռոմի տարուհիների (перепринки) և այն քաղաքացիների մէջ, որոց վերայ չէր տարածւած կրթական իրաւունքներ, այդպիսիներից չէր պահանջւում մի որ և է ձևականութիւն ամուսնութեան գործի

այլ թէ կատարուեալ էր հասարակ ձեականութեամբ, որով կինը մտում էր հօր իշխանութեան ներքոյ չենթարկելով ամուսնու իշխանութեան: Իսկ այդպիսիների բաժանումը կամ լուծումը կարող էր առաջ գալ ամուսիններից մէկի կամ միւսի մահով և կամ ազատութեան իրաւունքները կորցրած դէպքում:

Այդպիսով ուրիմն, հնումն Հռոմում կենակցութիւնը իւր աչքի ընկնող պարզութեամբ և անքակտելիութեամբ առաջի տեղն էր բռնում:

Եւ թէ և առաջնութեան պատիւը այր մարդունն է եղել, բայց և այնպէս կինը նրանից յետ մնացած՝ չէ եղել: Օրինակ ստացւածքների տնտեսութեան, գաւակների կրթութեան և ընդհանրապէս հասարակաց աչքում կինը՝ թէ իւր տեղը և թէ յարգանքն է ունեցել: Սակայն կայ եղել մի օրէնք, որի հիման վերայ, եթէ կինը դէմ գնար իւր ամուսնական հաւատարմութեանը, մարդը կարող էր սպանել կնոջը և այդ քայլը դատապարտելի չէր:

Սակայն հռոմէական կայսրների դարեշրջանում, պսակի կտպը կամ կարգաւորութիւնը կորցնում է իւր նախնական ոյժը՝ պսակալուծումը սովորական թեթեւ երեւոյթ է հանդիսանում և բարքերի ապականութիւնը այն աստիճանի է հասնում, որ ըստ Սենեկայի (54 թ. Ք. ծ. առ): «Մի քանի պատուաւոր կանայք տարեզուխ հաշտում էին ո՞չ թէ քոնսուլներից, այլ իւրեանց ամուսիններից, որոնցից նորա բաժանել էին. իսկ բաժանում էին նորա համար, որպէս զի նորից մարդու գնային՝ եւ ապա բաժանէին»:

Հասկանալի է, որ հասարակութեան այդպիսի դրութեան ժամանակ այր մարդու իշխանութիւնը կորցնելով իւր նշանակութիւնը՝ նա յետագայ օրերում դարձաւ կանանց համար խաղալիք:

Հին-աւուրց կարգերը հետզհետէ կորան: Առաջ՝ կօնֆարգիա, որը մինչև քրիստոնէութեան մուտ գործելը պահուում էր: Յետոյ՝ կօէմպիան: Հասարակութեան նոր պահանջների և հայեցակէտերի համաձայն կենակցութեան

միակ ձևը դառնում է պսակ՝ առանց կախումն (manis) ունենալու ձեւը՝ որով կինը լիազօր էր իւր ինքնուրոյնութեամբ իւր սեփականութեան տէր լինել: Այդ պայմանով միակ գոհացում տուողն է լինում պսակը՝ «ez juregentium», որը Յուստինոսի օրով ընդհանրացած բնաւորութիւն ստացաւ:

Բարձր դասակարգի համար՝ բուական էր ձեւակերպել այդ ձև պսակի պայմանները (documenta nuptialia seu pactadotalia):

Միջին դարին, եկեղեցու պետին կամ պաշտպանին (ներկայացուցչին) յայտատարել (defensor ecclesia), իսկ յետին կամ վերջին դասակարգի համար նոցա փոխադարձ համաձայնութիւնը, (consensus) իրաւունքների որոշման համար: Կրօնական օրհնութիւնը եկեղեցու միջոցով IX-երորդ դարում՝ Լև իմաստասէրի (Ֆիլոսոֆ) օրով է ծէս դառնում:

Այնուհետև փոքր առ փոքր ամուսնական խնդիրը դառնում է անհատի մասնաւոր կեանքի իրաւունք՝ դուրս գալով քաղաքական դրութիւնից: Ընդհանրապէս՝ Հռոմում, դեռ քրիստոնէութիւնից շատ առաջ, այդ իդէալական հարցը յայտնչ՝ չափով պարզ յայտարարւած է եղել:

Այդ տեսակէտի իսկութիւնը երևում է նոյն իսկ հռոմումէական իրաւագէտ Մոտեստինի*)՝ հետեւալ պատմական խօսքերից.—

«Huptiae sunt conjunctio maris et feminae consortium omnium vitae, divini et humani juris communicatio»: Այսինքն՝ «պսակը է, այր և կին ամուսինների կապակցութիւնը, ու ճամբողջ կեանքի միաւորութիւնը, և ասուածային և մարդե՛կային իրաւունքների յարաբերութիւնը»:

* * *

*) Ժամօթութիւն. Մոտեստին III-ը դարում՝ 226-244 թ. եղած է praefectus viqilum Հռոմում և Մաքսիմիանիոս կայսեր դասատու: Գըրած է իրաւագիտական ընդ որ ճիւղերի մասին հատորներ. ևս առաւել ամուսնական խնդրի վերաբերեալ: Ծնթ. ուսումնասիրողի:

ԳԼՈՒԽ Թ.

Հ Ի Ն-Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա.

(Բովանդակութիւն)

Բազմակնութիւնը և գերմանացիք: Տացիտա՝ ժամանակակից ամուսնութեան մասին: Գերուլլների կանայք և մարդկանց թաղումը: Ամուսնացողների հասակը-ընդհանրապէս և մասնաւորապէս՝ լոնդոնացիների, սակսերի և Ֆրիդների մէջ: Նշանադրութիւնը և մատանի տալու սովորութիւնը: Ոչ ազատների նշանադրութիւնը: Տուրք փեսայից իւր տիրոջին կամ գումար և կամ առաջին գիշերը: Ճեղքուկան շրջանի ամուսնութիւն: Քրիստոնէութիւնը: Գերմանական ցեղերի մէջ ամուսնութիւնը կնոջը չէր դրել այնպիսի ստոր վիճակի մէջ ինչպէս այդ Արևելքումն էր:

Բազմակնութիւնը հազազիւտ բացառութեամբ գոյութիւն ունէր. իսկ ընդհանրապէս՝ նա խորդ էր գերմանացու համար: Դրա համար՝ Տացիտա՝ խիստ զովասանական լեզուով դրւատել է իւր ժամանակի ամուսնական կեանքի մաքրութիւնը՝ և զուգակիցների անդաւաճան սիրոյ վերաբերմունքը:

Մարդու մահանից յետոյ, այրիացած գերմանուհին նոր մարդու չէր գնում. և նոյն իսկ մի քանի ցեղերի մէջ, օրինակ գերուլլների, կինը ինքը զինքը այրում էր մարդու թաղման խարոյկի մէջ: Գերմանիայում ընդունւած էր հասակն առնելուց յետոյ նոր ամուսնական կեանք կապել: Սակայն լոնդոնացիների, սակսերի՝ և Փրիզների մէջ ամուսնութիւնը համարւում էր օրինաւոր, եթէ ամուսնացողը լրացրել էր 12 տարին:

Ազգական ցեղակցութիւնը՝ ինչպէս և կոչմանց տարբերութիւնը՝ պսակադրութեան արգելաօրէթ չեն եղել: Բացառութեամբ միմիայն հարազատ ծնողներին իւրեանց զաւակների հետ արգելւում էր ամուսնանալ:

Ամուսնութիւնից առաջ՝ նշանադրութեան ժամին պիտի փեսացուն իւր ազգականներով ներկայացնէր իւր ժամանակին ընդունւած որոշ գումարը, որպէս հարսնեզին:

Այդ գումարը տալով՝ հարսնացուն այն ժամից համարւում էր արդէն ազատ և դուրս եկած ծնողների իրաւունքի տակից և այդպիսով իրաւունք ունէր մտնելու ի շարս փեսայի ընտանեաց, ընդունելով իւր տղամարդու հովանաւորութիւնը: Երկու կողմից տրւում էր նշանի-մնատանի, որից յետոյ նշանադրւածները զրկախառնւած համբուրւում էին:

Ստրուկների նշանադրութիւնը կատարւում էր նոցա տիրոջների միջոցով և այդ պատճառով տէրը փեսայից առնում էր մի որոշ տուրք կամ առաջի գշերւայ տիրացումը:

Սկզբներում՝ ազատների և ստրուկների մէջ պսակը սակաւ էր. բայց հետզհետէ սկսեց ընդհանրանալ այդ՝ բայց, այդպիսիներից ծնւածները համարւում էին ստրուկներ: Այդ ֆեոդալական շրջանումն էր:

Պսակադրութիւնը նշանադրութիւնից ուղիղ մի տարի յետոյ էր կատարւում: Հանդէսն սկսւում էր նախ անգործով և ապա զոհերբրութեամբ: Աղօթում էին Լօկի և Դօնար-Փրօ շաստուածներին, որոնք համարւում էին թեւրկող պահպան նոր ամուսնացածների և ընտանեկան սովորութեանց: Այնուհետև սկսւում էր պսակի հանդերձներ հանգցնելը առանձին հանդէսով: Երկրորդ օրը՝ նորապսակ ամուսինը բերում էր նորահարսին նւէր, որը կոչւում էր «առաւօտնան ընծայ» և դա էր նշան անքակտելի սիրոյ: Այդ նւէրից առանձին տրւում էր նաև երկրորդ պարգևը իբրև վարձատրութիւն նորաստի կնոջ կուսութիւնը կորցրածի փոխարէն:

Օժիտի սովորութիւնը գոյութիւն ունէր և հարսնացուն տանում էր իւր հետ առանձին «բաժինք» ծնողներից. իսկ ամուսնուց ստանում էր առանձին մաս, որը մնում էր որպէս կենսական միջոց և ի դէպ իւր ապագայ անբաղդութեան օրում նրանով կարող էր ապրել:

Սակայն երբ քրիստոնէութիւնը սկսեց մուտք գործել, պսակի մասին եղած հին սովորութիւնները բոլորովին անհետացան տեղի տալով նոր դաւանանքի ստեղծած ամուսնական խորհրդի:

* * *

ԳԼՈՒԽ Ժ.

Հ Ա Յ Ե Ր

(Բովանդակութիւն).

Հեթանոսական օրերից մնացած ամուսնութեան նմուշներ: Նշանադրութիւն: Օրօրոցի նշան (Բէշիկ-քեարթմա): Հարսնեգին փեսայից: Նշանի զարդեր. նւէրներ: Օժիտ կամ բաժինք: Նշանածները տաղաւարներում: Նշանածատես: Ամուսնութիւնը քահանայի ձեռքով: Պսակը աղանդաւորների մէջ: Հայ լուսաւորչական սինօզի որոշումը: Հարս առնել և խաչ եղբայր: Հինա գնելու գշեր և գլխի գովք: Թագւոր կանգնել: Այցելութիւններ: Լուսածէգին թագւորի աղօթքը: Հանդերձ օրհնէք: Պարով եկեղեցի գնալ: Կրօնա'լան ակտ: Թագադրութիւն և նարօտ. նորապսակեալների գինի տալ: Հացով ընդատաջել պսակին. փող շաղ տալու սովորութիւն: Հասարակական մեծ պար: Հարսի և թագւորի պար մտնելը մոմերով: Երեկոյթ: Հաւթոնք: Աղջիկ փախցնելու սովորութիւն: Մահացած փեսայի փոխարէն հարսի տագրին առնելը: Խնազէջսի:

* * *

Նախ քան քրիստոնէութիւնը, հայերի մէջ ինչ ձևի և որպիսի ծիսակատարութեամբ է տեղի ունեցել պսակադրութիւնը՝ այդ յայտնի չէ: Գոնէ հայ հին պատմագրերից և ոչ մինը այս առթիւ մի որոշ և ամփոփ տեղեկութիւն տուած չէ: Սակայն ներկայ ժամանակի հարսնախօսութեան ձևը, ընծաների տեսակը, հին-խորայէլեան ազգից թողած նմուշներ են: Իսկ մի քանի սովորութիւնների զործադրութիւնը ապացոյց է, որ հնումն հայերը ունեցել են ճոխ հարսանեկան ուրախութեան ծէսեր իւր հարուստ նուիրաբերութեամբ: Ուստի նախ քան համեմատել ներկայ ժամանակի ամուսնական կրօնական ակտին, նախ առաջ բերենք հարսնախօսութեան, նշանդրէքի սահմանած այն ձևը, որ մինչև ցօրս էլ պահուում է հայ գիւղացու օճախում իբրև հին օրերից մնացած մի. աւանդ:

Ինչպէս Հին-Ասորեստանում, ուր հարսնացու աղջիկ ընտրելու համար առանձին տօնական օրեր կան եղել, այնպէս էլ Ասորեստանի հարեան Հայաստան աշխարհում հին

օրերից քրիստոնէութեան «ուխտազնացութեան» փոխարկւած հանդէսներում աղջիկ տեսնելու և ընտրելու սովորութիւնը ընդունուում է և այժմս էլ կատարուում է: Գարնան դիմաւորելու մի օր՝ և կամ «Համբարձման, Հոգեպալլատեան, Վարդավաթի և վերջապէս Աստուածածնի վերափոխման» ուխտագնացութեան ժամանակ տեղի ունեցած բացօդեայ պարահանդէպներում, ուր 3—10 գիւղի երկսեռ ընակիչներ իրենց գոյնզգոյն հագուստով և տարազով հրապարակ են ելնում. այդ տեղերում և այդ ժամանակ էլ կատարուում է մեծաւ մասամբ հարսնացուի ընտրութիւնը: Իսկ մասնաւորապէս՝ միջնորդների ցուցմունքով: Ամուսնացող զոյգի ծնողների կամքը էական նշանակութիւն ունի: Նշանդրէքը առանց նոցա կամքի չի կարող տեղի ունենալ: Նշանդրէքը սկսուում է սակարկութեամբ. գնահատում են հարսնացուի նախ գեղեցկութիւնը, «հալալ-կաթնակեր» ծնօղնների զուակ լինելը, որը գիւղացիների համար մի անգնահատելի վրաւական է ապագայում անդաւաճան ամուսին՝ և արի ու բարի տանտիկին լինելու համար: Գեղեցիկ օրերը քիչ փեսայից առնում է հարսնեգին 100—150 ր. գրամ և ընծաներ:

Այս գումարի կէսը՝ փեսայի հայրը «նշնի» երեկոյեան է տալիս, իսկ միւս մնացածը՝ պսակից 8-ն օր առաջ: Բացի այդ հարսնեգնից՝ փեսայից ընդունւած է սպասել պարզաներ նախ զըքսնչի և աներոջ համար, ապա նոյն տան մէջ սպորոզ մօտիկ ազգականների համար ևս: Անդրանիկ պարզել ամենից առաջ որպէս գրաւական նշանի կամ նշնի հարսին տրուում է փեսայից նախ՝ «մատանի» և զլխի կարմիր շար: Վզնոց, ապարանջան, ականջի օդեր, վզի ոսկիներ, կօշիկներ և հագուստեղէնի մտաւքսեա կտորներ: Եթէ փեսացուն յայտնի համբայի (ունևոր, հարուստ) տնից է, հարսնացուին տարուում է նաև «Լօթ-համայիլ» *) և 'Լաքլամայ

*) Ծամօթութիւն.— «Լօթ-համայիլ» կանացի արծաթեայ կրծքի զարդ է, որ կրում են ընդհանրապէս նշանադրւած և կամ նորապսակ կանայք: Զարդի կենդրոնական մասը կազմում է եռանկիւնաձև (համայիլ) մի արծաթեայ կտրածը՝ ծածկւած ակունքներով. իսկ անկիւնների եզրները զարդարւած են մեծ կամ փոքր ոսկիներով: Կենդրոնական եռանկիւնի արծաթը միանում է պարանոցից կախւած շրթայի հետ, և այդ շրթան ևս ծածկուած է մեծ ոսկիներով:

քամար, **) հասարակ քամարի փոխարէն:

Նշան օրհնութիւնը կատարում է քահանան խաչիզբօր (երաշխաւոր պատկի) ներկայութեամբ և հանդիսականների: Գիւղացիների մէջ նշանագրութիւնը համարւում է «կեանքի երջանիկ թագաւորութեան շրջան», ուստի և հնումը տեւել է ուղիղ երեք տարի, բացառութեամբ «Բէշիկ-քեարթմայի» «օրօրոցում նշանագրել» որ տեւել է մինչև նշանւած զոյ՝ փերի 12 տարեկան լինելը:

Հայ եկեղեցու ազգային և եկեղեցական մեծ տօներին փեսայի ծնօղներից պահանջւում է ըստ տեղական սովորութեան «հարսնտես» գնալ իսկ փեսայից՝ նշանածատեսութիւն:

Երկու հանգամանքումն էլ հարսնացուն ստանում է նորանոր պարգևներ և հրապարակական խաղերի մասնակցութիւն: Նշանածատեսի ժամանակ փեսայի ընկերակից երիտասարդ անձնաւորութիւնը գտնում է մեծ ընդունելութիւն, որի միջոցով հարսը «զարնան ջրի տաքութիւն ունեցող ջրով» լանում է եկւոր հիւրի ոտքերը, որի փոխարէն ստանում է 50 կոպ. — 1 ռուբ. և կամ մետաքսեա թաշկիտակ քաղցրաւենիքով:

Ինչպէս Նշան օրհնէքը, այնպէս էլ պսակը կատարում է քահանան եկեղեցում: Հնումն, ամուսնութիւնը կատարել է բացառիկ դէպքերում մասնաւոր տնիքում հնոցի (թոնրի) շուրջը. բայց այժմ լուսաւորչական սինօղի որոշումով այդ խալառ արգելուած է:

Պսակուղ զոյգը՝ մինչև պսակ գնալները, առանձնացած է լինում միալով խաչիզբօր տանը:

Կան տեղեր, ուր կեանքը դէռ հին նահապետական կարգերով է առաջ գնում, (Արարան, Գարալագեազ, Ծիրակ) պսակադրութեան նախընթաց օրուայ հանդէսը այս կերպ է լինում: Մինչ հարսնացուն ձի նստած իւր «հարսնաւորների» մօտենում է իւր ապագայ կեցուն տեղին, հարսնաւոր

**) Ղարամայ քամարի տարբերութիւնը սովորականից այն է, որ սա խիտ փարթամ է: Փականի մօտ ամբարցած են երկու մեծ արծաթեայ կտրակ և ուռուցիկ անիւներ, որ ընդ գրկում է կըրծքի կէտը և աչքի է ընկնում իւր փարթամ ակունքներով:

և կամ թէ «հարսնա-հրաւէր» ձիււորներից մինը, որը արագ փախչող ձի ունի՝ թռչում է դէպի գիւղ և յայտարարում հարսի «ողջ ու աողջ» գալը, փոխարէնը ստանում է մի մեծ թաշկինակ ձիու պարանոցից կախ և օղիի հիւրասիրութիւն: Այդ աւետարներն է «հարսնաօի» (հարս-առնողների) աղւէսը:

Հարսնացուն ձի նստած մտնում է գիւղ և իջեցնում են նրան խաչիզբօր տան դրան մօտ, ուր մի քանի ըոպէ տեղի է ունենում «սեղան-բացէք», կենտապար և օղու բաժանում: Այդ ժամում, փեսան իւր ազգայնեղով (шафера) կանգնած նոյն այդ խաչիզբօր տան կտրան վերայ դիտում է իւր ընկերուհուն բարձրից. և երբ հարսը շարժւում է դէպի դրսի դրան սեմից ներս, փեսան կանգնում այդ դրան շէմքի բարձրութեան վերայ, իսկ հարսը անցնում է իւր ապագայ գլխաւորի ոտներնի տակից դէպի տուն, ուր նրա համար իւր կնքամայրը՝ (խաչեղբօր կին) առանձին և յարմար տեղ է պատրաստում: Նոյն այդ կտրան *) վերայ, թագւորի ազգայնեղը բռնած են լինում «թագւորի-ջլէն», որը ոչ այլ ինչ է, բայց թէ արհեստական մի ծառ 12 ճիւղերով, որոնք վերջանում են կտրակ գործւածքի վերջաւորութեամբ: Ծառի ճիւղերից կախում են քաղցրաւենիք և կարմիր խընձարներ, ճիշտ այնպէս, ինչպէս Ռուսիայում տօնածառի (ёлка) զարդարումը: Հարսի ներս մտնելու ըոպէին՝ թագւորը պարտական է խնձորով խփելու նրան. իսկ ազգայնեղը խլիլիլով մնացեալ խնձորները՝ գտնում են նրանում իւրեանց ապագայ բաղդի գրաւականը:

Կնքահօր (խաչեղբօր) տանը՝ բոլորովին ջոկ տեղում տեղ է յատկացւում նաև փեսային և ազգայնեղին: Դոքա ողջ գշերը լուսացնում են կատակներով և երգերով: Նախ քան այս, թագաւորը և ազգայնեղը անցած են լինում տեղական եկեղեցին, մասնաւոր սրբատեղիք (տեղական) և ապա

*) Ծանօթ. Կովկասում բնակութեանց կտուրների ծածքը և ձևը այնպէս չէ ինչպէս եւրոպական ազգերինը: Այստեղ կտուրները հարթ են և ծածկւած ցեխի մածուծիկ շաղախից: Ծառ տեղեր ուր ամառը խիստ շոգեր են լինում, մարդիկ կտրան վերայ են քնում:

բարեկամ ազգականների տուն՝ վերջիններիս օրհնութիւնն ստանալու: Թագուորը այցելում է նաև հարսանիքի հրաւիրւած ուրախակիցների տներն ևս կրկնակի «հրամեցէքով» դուրս է գալիս: Թէ բարեկամ, թէ ազգական և թէ դրացի ուրախակիցները՝ «Աստուած շնորհաւորէք» ասելով, կապում են թագուորի վրիզը «կարմիր ու կանաչ» մետաքսեա թաշկինակներ, որոնք կոչւում են «կոսրանդներ», մուրազ առնելու նշան են համարւում դոքա:

Այդ այցելութիւնից յետոյ փեսան գիշերում է խաչեղբոր տանը: Այդ գիշերը փեսայի համար համարւում է «թագուոր-կանգնելու» գշեր. ուստի նա կապում է իւր վերայ երկսայրի սուր՝ և հագնում է նոր շորեր ինչպէս ինքը, նոյնպէս և ազապները: Թագուորի՝ վիճակը այդ օրը տնօրինում է խաչեղբայրը, որը համարւում է ազապների պետ: Թագուորի տեղից շարժելուս ազապները հետևում են նրան: Եթէ դրան սեմից անցնի, կամ թագուորի խաչեղբայրը՝ և կամ ազապներից մինը անպայման սուրը մերկացրած պէտք է թագուորի գլխի ուղղութեամբ՝ դրան շէմքի մի անկիւնին պահէ մինչև թագուորի անցնելը: Տուն մտնելիս՝ «ազապ-բաշին» ձայնում է. «Դառնա թագուորի», իսկ ներկայ եղողները պատասխանում են յօտնկալս. «Աստուծոյ գառնա թագուորին»:

Կէս քուն՝ կէս արթուն, այդ գշերը լուսացնում են: Լուսածէգին՝ թագուորը իւր ազապների հետ դուրս է գալիս մի բացօդեայ տեղ և երեսը դարձրած դէպի աղօթարան, իւր ապագայի համար սրտեռանդ աղօթք է մրմնջում երիբ անգամ ծնրադրութեամբ: Մինչև ծնրադրութիւնը՝ թագուորը մերկացրած սուրը դնում է իւր հանդէպ՝ և նորա վերայ է աղօթում: Աղօթքից վերջը՝ նա իւր ատամներով բարձրացնում է սուրը և յետոյ բռնում պատեանն է դնում: Ներկայիս համարեա շատ տեղերում վերջացել է այս:

Այս բացօդեայ աղօթքից երկու ժամ անց, կատարւում է քահանայի ձեռքով փեսայի և հարսի հալաւ օրհնէքը և այնուհետև հրաւիրեալները ձեռքէ ձեռք բռնած սկսում են խմբական պարը և այդպիսով տանում են փեսային և հարսին

պսակելու: Մինչև այդ՝ փեսան և հարսը լինում են ծոմ:

Եկեղեցում տեղի է ունենում կրօնական աղալը: Հարսը, փեսան և խաչեղբայրը՝ հրաւիրւում են քահանայի կողմից դէպի առաջ—քահանայական դասը, ուր նախ լսում են հայ եկեղեցու ծիսարանի գրաբար խրատը, որը երբէք հասկանալի չէ եղել և չի էլ կարող լինել պսակողներին, այնուհետև սկսւում է հրապարակական «երիցս» անգամ համաձայնութեան հարցը ու փորձը: Պսակադրող քահանան զգեստաւորւած է լինում, իսկ օգնական ծիսակատարը՝ միայն շուրջառ առնում վերան: Երբ զոյգը կրկնում է գրւած «Մաշտոցի» ֆորմուլան թէ «այն հայր սուրբ, տէրն ենք», քահանան խաչակնքելով զոյգին՝ բարձրանում է սեղան: Երգւում է «Ուրախ լիւր սուրբ եկեղեցի» շարականը: Կատարւում է նաև վերաբերումն: Աւետարանն տրւում է համբուրելու թէ փեսային, թէ հարսին և թէ խաչեղբորը: Ծէսը շարունակւում է աղօթքների ընթերցումով: Կնքահօր ձեռքն տրւում է խաչ, որը բռնում է փեսի և հարսի գլխի մօտ՝ համարեա երկուսի մէջ տեղը կանգնելով: Հարսը և փեսան բռնում են միմեանց ձեռք. օրհնւում է պսակի նարօտը, որը բաղկանում է կարմիր և սպիտակ թելերի միացումից: Այդ նարօտն հագցնում են պսակադրողների պարանոցից և կնքում մոմով—խաչակնքելով հանդոյցները:

Երբ աղօթքի ընթերցումը հասնում է այն տեղ, ուր ասւած է. «Եւ եղեր ՚ի գլուխ սոցա զպսակ ի քարէ պատւականէ, երկու հասարակ սաղաւարդաձև թագեր տրւում է ազապներին մինը բռնելու հարսի գլխին, իսկ միւսը փեսայի: Վերջանում է աղօթքը, քահանան Հօր, Որդու և Ս. Հոգու անուշով, երեք անգամ մի բաժակ գինին փոխ առ փոխ, կութ առ կութ խմացնում են հարսին և փեսային: Այնուհետև առնւում է նարօտը: Գիւղերում՝ խաչի և թագի փոխարէն հարսի և թագուորի գլխին սպիտակ շղարշ են ձգում և գլուխները միմեանց մօտեցնելուց յետոյ՝ գլուխների վերայ դնում են սուր կամ թուր:

Պսակը վերադառնում է նոյն ձևով, ինչ ձևով նա եկած էր եկեղեցու մօտ:

Փեսայի ծնողները դիմում են նորապսակեալներին ընդ առաջ տաք լաւաշ հացերով: Կովկասի գիւղացիք հացը համարելով «խէր ու բարեաքեաթ» մի հացը գրում է փեսի ուսին, իսկ միւսը՝ հարսի: Թէ փեսայի մայրը և թէ հայրը երիցս անգամ համբոյր են տալիս պսակադրեալներին և ինքեան գտնելով իրենց ուրախութեան գագաթնակէտին հասած, մարդ ու կին՝ շատ անգամ նաև ծերացած, այդ օրը չ'տեսնուած ուրախութիւն և պար են գալիս պսակի դիմացը:

Նոր-Նախիջևանի գիւղերում պսակի վերադարձին կամ փող են շաղ տալիս և կամ աղաւնի արձակում կարմիր ու կանաչ ժապաւէնով:

Անդրկովկասում, պարահանդէսով յարգում են պսակադրեալներին: Հարս ու փեսայ այդ գշեր պարն են մտնում: Նւազում է զուռնան, հարում է թմբկահարը իւր թմբուկը (դհօլ):

Փեսային և հարսին պար հրաւիրողը լինում է խաչեղբայրը իւր կնոջ հետ: Այդ գշերը կոչւում է «հարսի և թագւորի պար մտնելու» գշեր: Սորա տարբերութիւնը սովորական պարերկոյթներից նրանումն է, որ այս սկսւում է «մոմաւառութեամբ»: Առաջի երեք պտոյտին փեսան բռնած է լինում խաչեղբոր կնոջ ձեռքը, իսկ խաչեղբայրը՝ նորապսակեալ սանամօր ձեռքը: Երեք պտոյտից յետոյ՝ խաչեղբայրը և իւր կինը՝ թոյլ են տալիս նորապսակեալ զոյգին հրապարակաւ միմեանց ձեռք բռնելու: Խաչեղբայրը անցնում է պարի գլուխը (պար-բաշի՝) երկրորդ տեղը փեսան, երրորդը՝ նորահարսը, իսկ չորրորդ տեղը խաչեղբոր կինը, որից յետոյ կարգաւ հետևում են մօտ բարեկամք՝ այր և կին: Դհօլչին և զուռնաչին միքանի բոպէ ընդհատում են նւագածութիւնը. ստացւում է «շաբաշ» թէ խաչեղբորից՝ թէ փեսայից և մօտ բարեկամներից: Խաղը վերսկսւում է և զուռնան նւագում է կամ ծանր պար՝ և կամ «սաքմա» կոչւած թէ հին և թէ բաւականին դժւար խաղը: Ընդհանուր առմամբ այդ խմբական կոլոր պարը բաւականին լուրջ տպաւորութիւն է թողնում: Հարսի և փեսայի պարելը երկար տևելու չէ 5—6 պտոյտ՝ և անա խաչեղբոր կինը իջեցնում է նորապսակ-

եալին (հարսին) պարից և տանում ուղիղ առաջատու: Փեսան ևս իջնում է, բայց փոխանակ հետևելու նորահարսին՝ նա մնում է իւր «ազապների» մօտ և մինչև «մէջ-գզերին» երբ հազիւ-հազիւ պարը վերջանում է, որից յետոյ իւրաքանչիւրը իւր տունն է շտապում:

Պէտք է յիշել, որ նախ քան փեսայի և հարսի «պար մտնելը» որը համարւում է ուրախութեան» վերջին տեսարան, տեղի է ունենում ընդհանուր ճաշկերոյթ: Ճաշից յետոյ՝ մէջ է բերւում հարսի բերած օժիտը՝ և մի առ մի ցոյց են տալիս բարեկամ հիւրերին: Յիշատակւում է ընծաները թէ ում՝ ինչ է բերել հարսը: Առաջի տեղը տրւում է խաչեղբորը և նորա ընտանեացը. այնուհետև մօտ բարեկամների: Այնուհետև, դրւում է մի մատուցարան սեղանի մէջ տեղը՝ և իւրաքանչիւր հրաւիրւած իւր կողմից փող է դնում յօդուտ նորապսակեալների: Առատ նւէր ստացւում է խաչեղբորից՝ հարազատ մօտիկ ազգականներից (փեսայը, մօրաքոյր, հօրաքոյր և այլն): Այս տուրքը կոչւում է «Սաչու», որով թեթևանում է հարսանիքի տիրոջ գրութիւնը ծախքերի կողմից: Ընթրիքից յետոյ իգիթների ըմբշամարտն է տեղի ունենում, որ կոչւում է «հաւ թռոնք»: Իւրաքանչիւր ազապ իւր տանից մի հաւ բերելով այդ հրապարակում բուռ սրի հարւածներով ցոյց է տալիս իւր բազկի ոյժը հաւերի գլուխը թոցնելու գործում: Ի վերջոյ այդ հաւերով մի աւելորդ քէֆ ևս տեղի է ունենում փեսայի և ազապների մէջ:

Հարսանեկան ընդունւած կարգերի մէջն է նաև օրիորդ-հարսնացուի «գլուխը զովելու» և «հինա-դնելու» սովորութիւնը: Երբ հարս-առնողները (հարսնառը), որոց գլուխն է անցած լինում խաչեղբայրը՝ մօտենում են հարսնացուի բնակարանին, հարսը տանը չեն գտնում: Նա իւր «ուստա կնոջ» (այն կինը, որի մօտ կար ու կտուր է սովորել) տանն է լինում: Ուստակինը իբրև երկրորդ դաստիրակչուհի իւր «շակերտի» (աշակերտ խօսքի կրճատ ձևն է) գլուխը վերջին անգամ իւր տան մէջն է լսնում և սա համարւում է վերջին հրաժեշտի քաղցր յիշատակ: Հարս-առնողները

աղջկայ հօր տանը թէյ խմելուց յետոյ, «դհօլ-զուռնայեօլ» դիմում են ուստակնոջ տունը: Տալով պարզև ուստակնոջը՝ (ուստա-հախ) հարսնացուն շղարշով ծածկած, ձեռքը ոսկէ-զօծ մոմեր տւած, որի աջ թևն է անցնում ուստակինը և ազգական կանանցից երկուսը կամ հասակակից ընկերուհիք, հրապարակական պար խաղով՝ դարձնում են դէպի ծնօղական տուն:

Մինչ հարսը մօտեցած է լինում հօր տան դրան շէմքին, ծնօղական տան դռները յանկարծ փակւում են նրա և հիւրերի հանդէպ: Սկսւում է չարածձի մի խաղ: Հարսի եզրայրը խաչեղբորից մի բան կորդելու համար «գունբացէք» է պահանջում: Ստացւում է 1—2 բուրլի փող՝ այնուհետև հարսը իւր ուրախակիցների հետ մանում է ներս: Սկսւում է երեկոյթ, պարահանդէս, որը վերջանում է «նարսի գլուխը գովալու» և «հինա-դնելու» սովորութեամբ: Հարսի ընկերուհիք վերջին գշերն են անցկացնում իրենցից բաժանւող հարսնացածի հետ. ուստի և սկսում են լանալ գլուխը և թախիժ պատճառող երգերով բաւականին լացացնում են հարսնացուին: Գլուխ գովքէկից վերջը՝ ձեռքերին հինա են դնում, որը համարւում է անբաժան ուրախութեան մի նշան:

Հետեւալ օրը՝ հարսին տանելու օրն է: Սկսւում է մի սրտաճմլիկ տեսարան: Հարսնացած դուստրը մօտենում է նախ հօրը և լալագին տալիս է վերջին մնաք բարևը, խընդրելով ծնօղի օրհնութիւնը: Լալիս է հայրը, լալիս է մայրը՝ և համարեա գերդաստանի իգական բաժինը: Հայրը գրկելով գաւակին օրհնում է նրան և տալիս է մօրը: Վերջինս մայրական տաք համբոյրներով և արտասւտաթոր աչքերով հետևում է դստերը մինչև դռնից անցնելը:

Նւագում է գուռնան կարօտագին մնաք բարովի մի ընդունւած եղանակ, որը կոչւում է «հարս-հանելու» եղանակ: Երբ հարսն արդէն ոտքը մեկնում է ծնօղի տնից, գուռնան փոխում է եղանակը՝ սկսելով «ջիրիթի» ձիարշաւ եղանակը: Հարսի եղբայրներից մինը հետևում է քրոջը մինչև նոր ծնօղական տունը՝ 2—3 օր հիւրասիրելով խնամիներից՝ պարզև-խալաթով վերագառնում է տուն:

Ինչպէս արևելեան ազգերի մէջ, այնպէս էլ կովկասում և Անդրկովկասի հայերի մէջ հարս գնացող օրիորդի կուսական մաքրութեան առանձին և յատուկ նշանակութիւն են տալիս: Անբաղդ է այն ծնօղը, որի դուստրը յանկարծ կուսական մաքրութիւնից ձուռնունայն է եղած: Նման երեւոյթները պսակալուծութեան և մարդասպանութեան առիթ են տւել:

Դօնի դիւերական շրջանի Նոր-Նախիջևան քաղաքի՝ Ինչպէս նաև Ղրիմի թերակղզում բնակող հայերի մէջ՝ նշանւած օրիորդի գլուխը գովալու և հինա դնելու սովորութիւն չկայ: «Մննագեջսի»-ի գշերը՝ երբ երկու կողմի խնամիք հաւաքւում են աղջկայ ծնօղի տունը, սովորական հաց-կերոյթից յետոյ սկսւում է «կնտապար», որը վերջանում է նրանով, որ հարսին նստացնում են մի աթոռի վերայ, գլխին դնում են նախ սպիտակ, ապա «կարմիր ու կանախ» մետաքսիա թաշկինակներ՝ և ապա շար (շղարշ):

Հարսի հայրը, մայրը, եղբայրները և մօտ ազգականները մի քանի պտոյտ խաղով հարսի դիմաց և շուրջը՝ վերջին ուրախութիւնն են կատարում և ապա համբուրւում բաժանւող հարսնացուի հետ: Զուռնան նւագում է «ալիէլի» արարական բարդ և մեկամղձոտ եղանակը, որից յետոյ տրւում է հանդիսականներին քաղցրաւենիք: Հնումն՝ մօտ 100 տարուց աւելի՝ Ղրիմում եղած կայ եղել սովորութիւն, որ այդ գշերը՝ տան առաջաւոր մարդիկ՝ (էրեկ) մկրատով խուզելիս են եղել հարսնացուի ճակատի վերայի մազերը:

Աղջիկ փախցնելու սովորութիւնը մինչև օրս էլ կայ հայերի մէջ: Կայ նաև այն սովորութիւնը, որ երբ փեսացուն դեռ չ'պսակւած մահանայ, հարսնացուն կարող է առնել փեսայի ամուրի մնացած եղբայրը:

Եկեղեցական կրօնական ակտը որոշ կիրառութեան մէջ է մտնում, երբ պսակ կատարող քահանայ այդ պսակաղբութիւնը արձանագրում է իւր թեմի կոնսիստորեայից տւած ժողաւինեալ մատենում:

* * *

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ս Լ Ա Ի Ե Ա Ն Ն Ե Ր

(Բովանդակութիւն).

Ամուսնութեան ազատ ձև հին-սլաւեաններէ մէջ: Ազ- ջիկ փախցնելը: Հերոսուհիներ: Դեւիտի շինութիւնը: Տրօստեն: Վլաստա և նորա մահը: Բօնիֆացիոսի վկայութիւնը: Պատ- մազիւր Նեստոր: Ազգամիջեան հարազատների ամուսնութեան ձևեր: Հարսնացուին զննելու սովորութիւն: Բոնի պսակ: Առաջի գշերւայ արտօնութիւն: Օլ'գայի վճիւրը: Բազմա- կնութեան զէպքեր: Մեչիսլաւ և Վլադիմիր: Հարուսաներ և նոցա կանանց թիւը: Նահապետական նիստ ու կաց: Կնոջ թշւառ վիճակ: Ալտայեան ցեղի ընդհարում և կնոջ անաս- նական վիճակը:

* * *

Սլաւեանները՝ ՚ի բնէ մեծ հակումն են ունեցել զէպի ազատութիւնը՝ և անկախութիւնը, ուստի այդ իսկ պատ- ճառով ամուսնութիւնը եղած է ազատ: Փախցնելու սովո- րութիւնը՝ մինչև այսօր ևս կայ: Կնոջ ազատութիւնը սլա- վեանների մէջ տեղ է պատմական հերոսուհիներ: Այժմեան Պրագա քաղաքի մօտքերում՝ ուսս հերոսուհիները շինել էին «Դեւիտ» անունով քաղաքը. իսկ սրանից քիչ հեռու, սլաւեան կտրիճները՝ շինել էին «Տրօստեն» քաղաքը, ուր փոխ առ փոխ տեղի է ունեցել ընդհարում և յաղթութիւն: Դեւիտի բերդապահ եղած է «Վլաստա» անունով մի հերո- սուհի, որը իւր չափանց անգութ վարմունքի պատճառով (օրինակ արու զաւակների աչքերը փորել, ձեռքերի և ոտ- ների մատները կտրատել որպէս զի ջլատուի, անպէտքանայ արանց ցեղը), Տրօստենի քաջերից գերուում է՝ ու գլխատ- ւում:

Բօնիֆացիոս՝ որ սլաւեաններին յարգողներից չի հղել, այդ ազգին համարել է «ամենա-անամօթ» ազգ, այնու ա- մենայնիւ վկայում է, որ ազատ սիրոյ զուգուրութեամբ կենակից սլաւեանների մէջ եղել են զէպքեր՝ որ երբ կե- նակիցներից մարդը մահացել է, այրի կենակից կինը կա- մովին հրաժարելով կեանքից՝ ինքնասպան է եղել: Կինը՝

անկախ իւր ամուսնուց ունեցել է հող, գետին, գիւղ և մի- անգամայն ազատօրէն կառավարել է այն: Սլաւեանների մէջ կինը հանդիսացել է երկրի կառավարիչ, իշխանուհի, դատուոր՝ գրել է օրէնքներ. սակայն և եղել են զէպքեր, ինչպէս այդ վկայում է Մեստոր պատմագիրը, սլաւեան- ների մէջ եղբայրը իւր հարազատ քրոջ հետ ամուսնացել է: Իսկ երբ արիւնակիցներից մէկը ընտելանում է իւր ցեղի մարդկանցից առանձին օտարին, ահա այդ օրից ազգամի- ջեան կենակցութեան ձևը հետզհետէ վերանում է, որից յետ սկսւում է կնոջ օտարին վաճառելու սովորութիւնը: Փե- սացուն հանդիսացել է որպէս զնոզ, իսկ հարսնացուն՝ զնե- լու իր: Եղել են սովորութիւններ, որ նշանադրութիւնից առաջ հարսնացուին տան մէջ բերելով՝ փեսան ու ուզողները մոմ առած ձեռքերին սկսել են զննել նրան այնպէս, ինչպէս ծախու ձիուն: Բոնի պսակը ընդհանրաբարում է:

Դեռ ճորտութիւնից չազատուած ժամանակում, սլա- վեանների մէջ տեղի է ունեցել նաև այն, որ տան ցեղա- պետը ունեցել է լիազօրութիւն օգտակալ իւր ցեղի ան- դամների կանանց առաջի գշերւայ տիրապետութիւնից: Սա- կայն այդ տգեղ սովորութիւնը վերանում է Օլ'գայի օրով: Կնոջ անկախութիւնը ընկնելուց յետոյ՝ տղամարդը իրեն զգացել է բոլորովին ազատ իւր բարոյական պարտաւորու- թեանց դործում. և բանը հասել է մինչև այնտեղ, որ տեղի է ունեցել ըստմանութիւն:

Օրինակ՝— Մեչիսլաւ՝ ունեցել է 7 կին: Վլադիմիրը՝ 6 կին և 8 հարձ: Ըստ Նեստորի՝ հարուստ մարդիկ ունեցել են մինչև 10 կին: Ծերացածներին արձակել են՝ և առիւ երիտասարդուհիներ: Բայց այն զէպքում՝ եթէ պատաւ կինը ունեցել է հարուստ և բազմամարդ ազգական ծնօղներ, նո- քա աշխատել են զսպել՝ և կամ դիմադրել փեսայի և կամ այլ մարդու վայրագութիւնները կնոջ վերաբերմամբ: Նո- բատի կինը՝ մինչև 2—3 որդիների մայր դառնալը, ըն- դունել է որպէս բանուր աղախին:

Եւ երբ սլաւեանները՝ ալտայեան ցեղի հետ պատե- րազմներ են մղել, սլաւեանուհու դրութիւնը ուղղակի ա-

Նասնական է եղել: Օրինակ ձիերի փոխարէն, սայլերին լծել են փոխանակ անբան անասուններ, այլ թէ սլաւեան կանանցը 3-ից մինչև 4-ը:

* * *
ԳՂՈՒՆ ԺԲ.

ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԹԻՒՐԲՄԵՆՆԵՐԸ

(Բովանդակութիւն).

Աղջկայ հարս գնալու տարիքը: Երես ծածկելու սովորութեան մասին. հարսնախօսութեան ձև: Կենակցին փախցնելու սովորութիւն: Հարսնացածին շնորհաւորանքներ: Ծաշկերոյթ: Փեսայի կողմից հարսին փորձառութեան ենթարկելու սովորութիւն: Բէղուիններ: Նշանադրութիւն և պսակ: Կեղծ հրացանաձգութիւն և յարձակում հարսի տան վերայ: Հարսնաօր հիւրասիրութիւն և գեօվիդ: Աղջիկ փախցնելու ընդհանրացած ձևը՝ և ամուսնութեան 10-րդ տարին:

* * *

Միջին-Ասիայի անապատում ապրող թիւրքմէնների մէջ աղջիկը հարս է գնում, երբ լրացնում է 16—17-րդ տարին: Երես ծածկելու սովորութիւնը այնտեղ չկայ. այնպէս որ իւրաքանչիւր երիտասարդ հնարաւորութիւն ունի իւր ապագայ ընկերուհուն լոյս աչօք տեսնելու և ըստ այնմ ընտրութիւն կայացնելու: Հաւանութեան դէպքում՝ երիտասարդը իւր նպատակին կարող է հասնել հարսնացուի ընկերուհիների միջամտութեամբ: Օժիտի վճիռն էլ հէնց դոցա միջոցով է կատարւում: Հարսնախօսութիւնը և հարս տանելը՝ բաւականին բարդ ձևեր ունին: Ընդհանրապէս թիւրքմէնները սիրում են, որ իրենց կենակցին ձեռք բերեն փախցնելու միջոցով: Առաջի քայլից նա ուզում է իգիթ հանդիսանալ իւր սիրուհու աչքում. ուստի երբ նոյն իսկ խաղաղ կերպով անգամ սկսւած է նշանադրութիւնը, պսակը կատարւում է փախցնելու ձևով:

Երբ արգէն հարսի օժիտը պատրաստ է լինում, հարսի ծնօղները, ուղտերի վերայ բարձած տանում են փեսայի տունը: Հարսը մնում է հօր տանը: Փեսայի կողմի հարսաւնողները թէ հետևակ՝ և թէ ձիաւոր ու ուղտաւոր շրջա-

պատում են հարսի ծնօղական տունը. ուր և սկսում է երկու կողմից կեղծ պատերազմ: Տեղի է ունենում հրաձգութիւն օդի մէջ: Հարսի կողմնակիցները սկսում են յետ նահանջել: Հարստանողները ներս խուժելով ոյժի զօրութեամբ դուրս են քաշում հարսին և փախցնում փեսայի ծնօղների մօտ: Տանելով հարսին՝ նստացնում են նբան տան մէջ տեղը. մէջքը դարձրած դէպի դրանը, իսկ երեսը դէպի տան մէջ: Ծնօրհաւորողները լինում են նախ կանայք և ապա տղամարդիկ: Հարսը մնում է 2 շաբաթ փեսայի մօտ, յետոյ՝ տանում են նորից հէրանց տուն, որ երկար մնալով ենթարկւում է փեսայի կողմից փորձութեան: Փեսան ծածկաբար հետևում է նրա վարքին ու բարքին. և երբ դալիս է այն եզրակացութեան, որ հարսը գովելի է համբերութեան և պարկեշտութեան կողմից, ամուսինը նրան զարդարւած ուղտի վերայ նստացնելով տուն է վերադարձնում: Սրանով վերջանում է հարսանիքի մնացորդը:

ԲէԳՈՒՆՆԵՐ: (Փոքր Ասիա):

Բէղուինների մէջ հարսնախօսութիւնը միջնորդով է սկսւում: Նշանադրութեան (տалабъ) օրից 7 օր անց, տեղի է ունենում պսակի հանդէսը: Հարսի տունը այդ օրը շքեղապատում են երգող և պարող օրիորդներ և նորահարսեր (далилатъ) և երիտասարդներ, ուր սկսում է ուրախութիւն: Յետոյ՝ պատրաստում են խաբոյկ՝ և երբ հարսը աւանդները մօտենում են վրանին, սկսում է հրաձգութիւն: Խնամի ամբոխը հրացաններով պատասխանում է և աշխատում են դիմադրել: Բայց եկուր հարսնաւնող խնամիք դրո՞հ են տալիս դէպի հարսի ընակարանը և յանկարծ պատկերը փոխւում է: Սկսում է հիւրասիրութիւն: Ծերուհիներին տրւում է «ղայան» և կամ «սուրճ», իսկ երիտասարդները բռնում են խմբական պար (գեօվիդ):

Աղջկայ հարս գնալու տարիքը ընդունւած է 10 տարին: Երես ծածկելու սովորութիւնը տարածւած է. իսկ աղջիկ փախցնելու սովորութիւնը ընդհանրացած է:

* * *

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ի Ն Դ Օ Ս Յ Ա Ն

Կանդ ցեղ

(Բովանդակութիւն).

Հարսնացուի ընտրութիւնը և տարիքը: Օժիտի պայման: Քուրմի նշանակութիւնը: Պսակի խմիչք, որպէս նշան խորհրդի: Հարս փախցնելու ընտանեկան ձևը: Պսակեալների վզերին կապելու ժապաւէնների սովորութիւն: Կախարդը և իւր աղօթքը ջրի պատահելիս: Մինչ փեսայի հասունանալը՝ հարսի վիճակը:

* * *

Կանդերի մէջ ընդունւած է հարսնացուն ընտրել աւելի տարիքաւորից, քան փեսայից: Փեսայի տարիքը կարող է լինել 10-ը, բայց հարսին 20: Հարսնախօսութիւնը տեղի է ունենում երբ օժիտի հարցը լուծուած է: Այդ պայմանի մէջ մտնում է փող, ուստիս և կենդանիք: Հարսնախօսութիւնը և պսակը կատարուած է քուրմը: Պսակի ժամին անպայման ընդունւած է խմիչք տալ թէ հարսին և թէ փեսային մի բաժակով և նւէրներ աստուածներին: Նւիրաբերութիւնից վերջը՝ երկու կողմերի ծնօղները յայտարարուած են պսակը վերջացած:

Այնուհետև վերադառնում են տուն, ուր սկսուած է կեր ու խում: Հարս փախցնելու ձևը ներկայացնում են ընտանեկան խաղով: Քուրմը կապում է պսակեալների վզին դեղին ժապաւէն և ցանում է երեսներին դեղին կոճից փողի և այդպէս առաջնորդում հանդէս: Կռատից վերադարձին եթէ ճանապարհին ջուր կամ առուակ պատահի, քուրմը կարգում է կախարդութեանց առաջն առնելու աղօթքը:

Հարսը մնում է սկեսրայրի տանը, մինչև մարդու հասունանալը:

* * *

ԳԼՈՒԽ ԺԴ.

Հնդկաչին

Բ Ի Բ Մ Ա Ն Ն Ե Բ

(Բովանդակութիւն)

Կանանց վիճակը: Պսակի ծէսը: Բազմակնութեան վե-

րացումն: Երկրորդական կանանց նշանակութիւնը: Աւագ կնոջ իրաւունքը: Պսակից առաջ կենակցութեան որոշ ժամանակի որոշումը: Կնոջ բաժանելուց յետոյ՝ օժիտի վերադարձնելու սովորոյթը: Կինը իրաւատէր: Պսակալուծութիւն գուշակութեամբ: Սումնատրա: Մալայեան ցեղ և երկու չարիք: Ցեղական կապի ամբողջութիւն: Նաւա: Եւրոպացիների հետ խառնելու սովորութիւն: Ասիական բռնակալութեան սիստեմ Ջոնդեան և Լամբոկ կղզիներում: Տագալի ցեղ և աչքի ընկնող ազատութիւն: Օրիսրգների գայթակղութիւնը գովական գործ:

* * *

Բիրմանների մէջ՝ (Մալայեան արևիպելագ) կանայք բաւականին ազատ և ինքնուրոյն են: Պսակի ծէսը հետաքրքիր է: Ասիական և ոչ մի երկրում չկայ այն գեղեցիկ սովորութիւնը, ինչ նա է բիրմանների մէջ: Օրինակ՝ վաղ ամուսնութիւն չկայ: Եւ դա ոչ թէ հոգևոր կազմի դիրքն է, այլ թէ տեղական օրէնք է: Բազմակնութիւնը խիստ արգելւած է և թէև կան երկրորդական կանանց պահելու մի քանի նմուշներ, դա ևս արգէն վերանում է: Երկրորդական կանայք աղախնի դերումն են, ուստի և ենթարկուած են աւագ կնոջ իրաւունքին: Կայ նաև մի որոշ օրէնք, որ այր մարդու մահից յետոյ՝ երկրորդական կինը մնում է աւագ կնոջ իշխանութեան ներքոյ որպէս հլու հպատակ, եթէ մարդը մեռնելիս նրան չէ ազատել օրինական կարգով: Պսակից առաջ կենակցութեան համար որոշ ժամանակ են որոշում և կենակցութեան ժամանակը լրանալուց յետոյ՝ զուգակիցները կամ բաժանուում են՝ և կամ շարունակում ապրել միասին: Եթէ բաժանելին, կինը պարտական է վերադարձնել ամուսնուն իւր տարած և կամ ստացած օժիտը՝ բացի հագստից: Կինը իբրև իրաւատէր՝ իրաւունք ունի լիովին տէր դառնալու մարդու թողած կայքին: Պսակալուծութիւնը շատ յաճախ է տեղի ունենում և ձևը շատ հասարակ է: Օրինակ երկու ամուսիններ բաժանուելու դրա համար վառում են երկու մոմ և դնում են մի սննեակում և սպասում են թէ որի մոմը շուտ հալւեց և կամ

հանգաւ: Եթէ կնոջը շուտ հանգաւ, ուրեմն կինն է հեռա-
նում մարդու տնից. իսկ եթէ տղամարդունը՝ այդ դէպ-
քում տղամարդն է բաժանուում կնոջից համարելով իրեն
տարւած:

Սումաստրայի ներքին նահանգներում՝ մալայեան ցեղի
մէջ, տակաւին 2 չարիք կայ, մինը՝ մարդակերութիւն՝ իսկ
միւսը՝ ամուսնալուծութեան այն ձևը, որը կախւած է կա-
շաքի առատ քանակից: Կաշաքը ստանում է քուրմը և
ուժը աւելի եղաւ նա տարած է գործը: Այս հանգամանքը
տեղիք է տւել թէ սոսկալի զրկանքներին՝ և թէ սպանութիւն-
ների: Մալուսին՝ նկատւած է որպէս նւիրւած կին իւր
օձախին և իւր զաւակներին: Յեղական կապը խիստ ամուր
է և մեծ երկիւղածութեամբ պահուում է:

Եւալայի տեղացի բնիկների մէջ սկսել է խառնակ-
ցելու սովորոյթը եւրոպացիների հետ: Բայց և այնպէս
պահւած է ասիական բունակալութեան այնպէսի մի սիստեմ,
որից տուժում է իզական սեռը: Օրինակ — Զոնդեան կղզում
և Զոնդեան իւմըին պատկանող Լամըոկ կղզում, բնակիչ-
ները կանանց հետ խիստ անգութ են վարուում: Եւ անհա-
ւատարմութեան մի թեթև դէպք նկատուի, լամբոկցին կա-
պում է իւր կնոջը իւր սիրեկանի հետ՝ և միատեղ նստում
է ջրի մէջ կոկորդիլոսներին բաժին դառնալու: Եւ կամ
բաւականէ, որ ամուսնացած կինը մի օտարից և կամ ան-
ծանօթից սիգար վերցրեց ծխելու՝ պատիժը անխուսա-
փելի է:

Բայց Մանիլլա քաղաքում ապրող տազալի ցեղի
մէջ կինը որոշ ազատութիւն ունի: Դոքա այժմս քրիստո-
նեաներ են: Ամուսնութեան անհաւատարմութեան դէպքում
մի թեթև ձեռք՝ և աւելի ոչինչ: Սակայն կայ մի այլ և տար-
օրինակ սովորութիւն՝ և այդ է տազալի ցեղի օրիորդների
նիստ ու կացը եւրոպացիների հետ ամեն ազատութեամբ:
Եւ շատ անգամ այդպիսով եթէ օրիորդները գայթակղւում
են և ունենում են զաւակներ, այս համարում է մի տե-
սակ գովասանական բան:

* * *

ԳԼՈՒԽ ԺԵ.

Հարաւային ովկիանոս

ՅԱՅԻԴՆԵՐ

(Բովանդակութիւն).

Ամուսնութեան ձևը: Ազատ շարժումներ ամուրի կեան-
քում: Խստութիւն պսակից յետոյ: Զաւակ սպանութեան
սովորութիւն: Եղբայրական կապ տայիդների մէջ և դոցա
փոխադարձ պարտականութիւնը: Պալաու կղզի և Ժիւ-
բերտա արխիպելագ: Դադմայի նշանը հասունացած օրիորդ-
ների համար և նոցա ձևերը: Կանանց սիրելի զարդարանք:
Բարբերի թեթևութիւն պոլինեզիցի ցեղում: Մեյանիզէյցի-
ների մէջ օտարոտի վարմունք: Զաւակասպանութիւն: Մե-
րունիների ոչնչացում: Ֆեդի. զարդարանքի առատութիւն:
Աստղանիշ ձևի նպատակը: Կապոյտ խալ: Պսակադրութիւնը՝
իբրև հաւատալիք: «Բուրուտօ» և ամուրիներին երկինք
գնալու արդեւման հաւատալիք: Պապասներ: Պսակադրու-
թիւնը առևտուր: Նշան պսակադրութեան և եղբայրա-
կան սիրոյ:

* * *

Տայիդների մէջ ամուսնութեան ձևը և հայեացքը դէ-
պի կինը՝ նոյնն է համարեա ինչ որ չինացիների մէջ: Ամուրի
դոյգերին, ամեն տեսակ ազատ շարժում և ազատ յարաբե-
րութիւն մեղադրելի չէ: Բայց երբ տեղի է ունենում մըշ-
տական կապակցութիւն, կնոջ հաւատարմութեան վերայ
խիստ ուշադրութիւն են դարձնում: Տայիդների մէջ կայ
«զաւակասպանութեան» սովորութիւնը մեծ չափով. և նրանց
համոզմունքով որքան աւելի շուտ և շատ մանուկներ մա-
հացնել, այնքան աւելի սիրելի կլինեն չաստւածներին, որով-
հետև չաստւածների մօտ բարեխօս կողմակիցներ կուսենան:

Հնումը տայիդների մէջ կար եղբայրական կամ միու-
թիւն, որը տարօրինակ նշանակութիւն ունէր կենակցու-
թեան գործում: Երկու տղամարդ փոխադարձ համաձայնու-
թեամբ կապում էին իւրեանց ամբողջ կեանքում պաշտպա-
նողական և յարձակողական պայման և այդպիսիք պարտա-

կան էին ունենալու և ընդհանուր կանանց բաժին կամ բնակութիւն:

Պալաու կղզու և Ժիլըերտա արխիպելագի կղզիներում մարդու են գնում միմիայն այն օրիորդները, որոնք իրենց մարմինները ծածկել են «գաղմայի» նշաններով: Ի հակառակ դէպս, պէտք է «գաղմայ» քաշելու վճարքը հատուցանել, որ ըստ այնմ իրաւունք ունենայ պսակելու: «Գաղմայի» նիշերը մեծաւ մասամբ լինում են գծեր և բծեր: (Խալ *): Իսկ Ժիլըերտա արխիպելագում և Կարօլինեան (ըուստի) կղզում հասցնում են չափազանցութեան, ծածկելով մարմինը տեսակ-տեսակ նաշխերով: Կանանց սիրելի զարդարանք համարւում է ուսերի վերայ քաշած վայրի կըտաւհատի ծաղկի ձևի (Linaria vulgaris) նկարներ:

Պօլինիզէյցի կոչւած ցեղում՝ բարքերի թեթևութիւնը և փոքր հասակից մարդու գնալու դէպքեր աչքի են ընկնում: այն ինչ մեղանիզէյցի ցեղում չկայ: Տղամարդը մինչև մորուս ու բխեր չունենայ և չլինի 20—23 տարեկան՝ ամուսնանալու իրաւունք չունի: Վաղ ամուսնացողը՝ մահւան պատիժ է կրելու:

Մեղանիզէյցիների մէջ բազմակնութիւնը սահմանափակ է քան պօլինիզէյցիների մէջ: Ընտանիքում (մեղանիզէյցիների) մարդու և կնոջ յարաբերութիւնը խիստ օտարօտի է: Նոքա միասին չեն ճաշում և կամ միատեղ ննջում: Աւելի մոթ է վատ կողմի այդ ցեղի կայանում է «զաւակասպանութեան» գործում, որին և հետևում է ծերերի սպանումը, վերջիններիս աշխատանքի և կու գործում պիտանի չլինելու համար:

Մեղանեցի կղզու ցեղերի մէջ կայ նաև Ֆիդժի կամ Ֆիտի կոչւող ցեղը: Սրանցում զարդարելու գործը սկսւում է մատներից: Մատանու փոխարէն՝ օրիորդները իրենց մատների վերայ քաշել են տալիս «աստղանիշ» ձևեր, որպէս գրաւիչ նշան. և երբ իրենց տէրերին տալիս են կերակուր, այդ ձևերի սլշրանքը աչքի է ընկնում: Իսկ երբ օրիորդը

*) «Հայերի» և «բրդերի» մէջ ևս կայ «խալ» գնելու սովորութիւնը, որը համարւում է զարդ և նշան գեղեցկութեան: Մ. Հեղ:

մարդու է գնում, ա կապոյտ «խալ» է գնում բերանի բացուածքի երկու անկիւններում:

Պսակադրութիւնը՝ հաւատարիքի հետևանք է: Ֆիդժիների մէջ ընդունւած է կարծել, թէ ով որ կամենում է «երկինք-գնալ», պարտական է անպայման ամուսնանալ: Երկինքը՝ դոցա աչքում արքայութեան նշանակութիւնն ունի և կոչւում է «ըուրուսո»:

Չ'պսակւածը երբէք յոյս չ'պիտի ունենայ մտնելու բուրուսո: Ենթադրւում է, որ եթէ ամուրիներից մինը կ'յանդգնի երկինք գնալ, այն ժամանակ «ամննա աճնդ կլինը» որ ներկայացուցիչ է ասուածների, և մահացու հարւած հասցնող ամուրիներին, խակոյն ընդ առաջ գալով, կտոր կտոր է անում այդ յանդուգն ամուրի մարդուն. և նոյն իսկ եթէ այդ այսպէս թէ այնպէս նրան չ'աջողի, օգնութեան կ'հասնի աւելի զօրեղ Աստուածը, որը ամուրի հոգին բարին խփելով փշուր-փշուր է դարձնում:

Պսպուսաներ: Նոր-Գվինիայում ապրող պապուաների մէջ պսակադրութիւնը կատարեալ առևտրական գործ է, որը զուրկ է որ և է ձևականութիւնից: Կղզու միջին մասում պսակադրութիւնը ունի որոշ սովորութիւն և այդ կայանում է նրանում, որ թէ հարսնացուն և թէ երկու կողմի ծնօղներ և մօտ բարեկամներ թեթև շանդուում են իւրաքանչիւրը իւր ճակատը և այդ նշան է եղբայրական միութեան և սիրոյ:

* * *

Գլուխ ԺԶ.

Հիւսիսային Ամերիկա.

Մ Ո Ր Մ Ո Ն Ն Ե Ր.

(Բովանդակութիւն).

Երկու տեսակի պսակ: Առաքեալների պարտականութիւնը դէպի իւրեանց յուսացողների ընտանիքը: Շէկկէրներ կամ բիբլէյսկի կոմմունիստներ: Սոցա գաւանանքը: Բարդ պսակ: Սիրոյ բացատրութիւն և ընդհանուր կացութիւն:

* * *

Մորմոնները*) եկեղեցին ընդունում է երկու տեսակի պատկերակ և երկու տեսակի նշանադրութիւն:

1) Որ կոչւում է «աշխարհային» և որը կարող է տեսնուի մինչև մարդու երկրաւոր կեանքի վախճանը:

2) Կոչւում է «երկնային» պատկեր:

Մի խօսքով մորմոնների մէջ տղամարդը կարող է ունենալ կին թէ ներկայ և թէ հանդերձեալ կեանքի համար: Մորմոնների մէջ մօտ արեւակցական կապերում, օրինակ քենու, հարսի հետ թոյլ է տրւում պսակելու փեսային և փեսայի հարազատ եղբօրը: Մորմոնացու կինը՝ կարող է ընտրել փեսացու նաև մեռածներին և 'ի դէպ'՝ մորմոնական առաքեալներից մինը կարող է փոխարինել մահացածին: Այդպիսին համարւում է հարս «երկնային»: Սուքեալի և կամ նրան երկրաւոր կեանքում յաջորդողների պարտականութիւնն է այդ «երկնաւոր հարսի» զաւակների պահել պահպանելը, որոնք համարւում են ս. զաւակներ:

Շէկկերներ՝ կամ բիրբէյսկի կոմմունիստները, Միացեալ Նահանգների ազանդաւորների թւին են պատկանում: Սոքա իրենց համարում են «Քրիստոսի երկրորդ գալստեան հաւատացող միացեալ ընկերութիւն»:**)

Հիւսիսային Միացեալ Նահանգներում, «կոմմունիստական» այդ ընկերութիւնը, որ զարկ տուեց սօցիալիզմին,

*) Մորմոնները սպրում են Հիւս. Ամերիկայի Ադի լճի շուրջը, նորանց առաջնորդը՝ ժեօզիֆ-Սմիտե-Իւնգ, որը բազմակնութիւն էր ընդունում սկեկց գործել 1844 թ.: Սակայն այս առաջնորդը իւր ընտանիքով 1874 թ. Իլինոյս քաղաքում ամբօխի կատաղի վարմունքին դո՛ս գնաց: Ծան. Հեղ.:

**) Ընկերութեան հիմնադիրը համարւում է Աննա Լի, մի աղքատ օրիորդ, որը սկզբներում ամուսնանալով մի ինչ որ Ստօնել անուանով մարդու հետ, յետոյ մարդու թոյլաութեամբ անցաւ Շէկկերների դաւանանքը բաժանելով մարդուց: Մայրապետ այս Աննան՝ քարոզում էր որ Ազամի և Եւայի յանցանքը կայանում է պսակի մէջ. և երկբը այդ մեղքը պահելով աւել է մարդուն անօրէնք կերպով:

Իբրև դաւանանք՝ նա քարոզել է գտնել միջոց մարդկային ցեղը ոչնչացնել աննպատակ կենսակցութիւնից:

դոցա կարծիքով՝ պսակը է խաբեբայութիւն*), իսկ նորա էութիւնը՝ զողութիւն:

Ըստ Դիկսօնի տեղեկութեան, դրանցում ընդունւած է «բարդ պսակ»: Ըստ նախահայր Նոյի, սխալ է այն, որ մարդս միայն պէտք է և կարող է սիրել մէկին: Այն ինչ, կարելի է սիրել ո՞չ թէ մի անգամ, այլ թէ մի քանի անգամ և մի քանիաներին և այս է ընտելեան օրէնքը: Ուստի և ընդհանուր կացութիւնը բիրբիականների ընտրած ձևն է և իւրաքանչիւր ամուսին և՛ եղբայր է և՛ քոյր իւր կենակիցների հետ:

* * *
ԳԼՈՒՆ ԺԷ.
Հարստային Ամերիկա
ԱՐՍՈՒԿԱՆՑԻ

(Բովանդակութիւն).

Այր ամուսինը «տէր և իշխող»: Ընկերական վերաբերմունք ամուսնական գործում: Հարսնախօսութեան ընդունւած ժամանակը: Բռնի վարմունք փեսայի և հարսնաւորների կողմից դէպի հարսնացուն: Օժիտի տուրք: Պսակն ընդհանրապէս անլուծելի: Բացառութեամբ արձակւած կնոջ նոր ամուսնու պարտականութիւնը: Մահան պատիժ՝ կանանց անհաւատարմութեան գործում: Օրիորդների թեթև վարքը ու բարքը: Պատագոնցիք: Արաուկանցիների նամուղութեան պսակ: Փախցնելու բացառութիւնը: Օժիտի սովորութիւն. բազմակնութիւն: Անզաւակութեանց դէպքում շների որդեգրութիւն:

* * *

Արաուկանցիների մէջ մարդը՝ կնոջ վերաբերմամբ և «տէր է» և «իշխող» և որից պահանջւում է ընտանիքի լի ու լի պահպանութիւնը: Եթէ երիտասարդը կամենում է

*) «Կոմմ. բիրբիականների» մեծ մարդաբէն համարւում է «Հայր Նոյը», որի վարդապետութիւնը կայանում է նրանում, որ բոլոր այր մարդիկ եղբայրներ են՝ ինչպէս և կանայք քոյրեր: Պէտք է վարել այնպէս, որ ամենքին դուրեկան լինի: Ընտանիքը՝ միշտ բարձր է համարւում քան անհատը: Ծան. Հեղինակի:

մտնել ամուսնական լուծ, (надѣтъ супружеское ярмо), որը իսկապէս նրան ոչ մի ծանրութիւն պատճառելու չէ, նա իսկոյն դիմում է իւր ընկեր բարեկամներին և վերջիններս գործը գլուխ են բերում: Շատ անգամ՝ բարեկամ կոչւած ընկերակիցները փեսային օգնում են նիւթական գործում, երբ նա դժւարութիւն կրէ հարսնեգին տալու:

Հարսնախօսութիւնը միշտ ընդունւած է կատարել լուսնկայ գշերներում: Փեսացուն և բարեկամները ձի նըստած գնում են հարսի տունը: Մինչև հարսնաւորների մի բաժինը աղջկայ հօր և կամ ծնօղի բարեկամների հետ հարսնեգնի քանակութեան մասին սկսում են խօսել և սակարկել, փեսացուն՝ միւս բաժին հարսնաւորների հետ մտնում է հարսնացուի ննջարանը և ուժով հանում են նրան քնելատեղից: Բարձրանում է մի սոսկալի ճիչ և աղաղակ: Հարսնացուին շրջապատող ծնօղ աղբական կանաչ՝ դիմում են զէնքի, իսկ բաղբաւոր փեսան, արաւեկանցիների կողմից համարւած այդ քաղաքավարութեամբ՝ հարսնացուի մազերից բռնած քաշ տալով՝ հասցնում են դէպի թամբած ձին, որը նրա համար յատուկ պատրաստւած է լինում դրանը: Մի ակնթարթում հարսնացուին փախցնում են և փեսան ու հարսը տեղ են բռնում մօտակայ անտառների մէջ: Անցնում է դէպքից մի քանի օր, այնուհետև հարսի հայրը ստանալով հարսնեգինը խնդիրը դրանով էլ վերջանում է:

Արաւեկացիների մէջ պսակն համարւում է «անլուծելի»։ Բայց եթէ տեղի ունենայ այդպիսին, այդ դէպքում երկրորդ այր ամուսինը պէտք է նախկին մարդուն վերադարձնէ այն ծախքերը, որը նա արել էր երկրորդ մարդուն եկած կնոջ անդրանիկ ամուսնութեան գործում:

Կանանց անհաւատարմութիւնը դէպի կենակիցը՝ վարձատրւում է մահան պատժով:

Որքան արաւեկանցիք խիստ են դէպի իւրեանց կանանց բարոյական պահպանութեան գործին, այնքան թոյլ են դէպի օրիորդները, որոնք աչքի են ընկնում խիստ թեթև վարք ու բարքով:

Պատագոնցիք՝ համարւում են արաւեկանցիների եր-

կրորդ ցեղը: Հարսնախօսութեան մի քանի ձևեր համարեա թէ նոյնն է ինչ որ արաւեկանցիների մէջ. բայց սոցանում բռնի կերպով փախցնելու սովորութիւնը և կամ հարսնացուին տանջանքներ պատճառելը՝ չկայ: Երբ աղջկայ հայրը ստանում է իւր որոշած հարսնեգինը փեսայից, առանձին հիւրասիրութեամբ ու ուրախութեամբ ճանապարհ է դնում աղջկան դէպի փեսայի տունը: Պատագոնցիների մէջ բազմակնութիւնը տարածւած է: Սակայն անդրանիկ կինը՝ մեծ յարգանք է վայելում միւս երկրորդական կանանց նկատմամբ: Եթէ կինը անզաւակ է լինում, նա կարող է զաւակի փոխարէն մի շուն որդեգրել: Այդ ձևը համարւում է պատւաւոր միջոց. ուստի և այդ շանը նւիրում են ընծաներ, ձի, ձեռակերտ պարգևներ. իսկ եթէ այդ որդեգրեալ շունը սատակի, նրա հետ և ոչնչացնում են իւր անունով ստացւած նւերները:

* * *

ԳԼՈՒԽ ԺԸ.

Հասարակածային եւ հարաւային Աֆրիկա

Յ Ո Ց Ե Ն Ց Ո Ց Ն Ե Ր

(Բովանդակութիւն)

Հարսնախօսութեան հին ձևի պահպանութիւնը: Նշանազնով օրիորդի յանկարծակի ամուսնական կեանք մտնելը: Բուրեր: Ծնօղները սրպէս բաղդ անօրինոյններ ամուսնական խնդրում: Փեսայի և հարսի տեսակցութեան ժամանակը: Ամօթխածութիւն: Փեսայի առաջի խօսքը հարսին: Համբոյրի բացակայութիւն: Թեթև ընծաներ: Պսակադրութեան ժամանակաւոր շորեր: Ամուսնացածների առաջի դէերը: Նորահարսը իբրև աղախին: Քաղմակնութիւն. հարսնեգին. պսակ առանց ծէսի: Նւերներ և հարսանեկան խընձոյք: Բէշուսններ: Հարսնախօսութեան համեմատաբար բարդ ձև: Հարսնեգնի առարկութիւն. հարսնախօսեր:

* * *

Հարսնախօսութեան այն նախնական ձևը, որը կայ Ասիայի հին աղբերի մէջ, մենք կարող ենք տեսնել հոտենտոտներ կամ «բուշմէնների» մէջ: Սիրահարւած երիտա-

սարգը մօտիկ ազգականների միջոցով յայտնում է իւր սիրահարութեան մասին իւր ծնօղիներին: Հայրը որդու և մի երկու մօտ բարեկամների հետ միասին գնում են հարսնացուի տունը: Սկսւում է խօսակցութիւն համարեա բոլորովին կողմնակի խնդիրների նկատմամբ: Երբ խօսակցութիւնը տաքանում է՝ և երկու կողմերի տրամադրութիւնը բարեկամական արտայայտութիւն է ստանում, փեսացուի հայրը՝ անշնում է բուն խնդրին, բացատրելով իւրեանց գալու նպատակի միտքը: Հարսի հայրը եթէ ստանում է իւր կամեցած թէ պարզւել և թէ հարսնեղինը, նշանադրութիւնը առանց ձեական ձգձուցումների կատարւում է:

Այլիկը կամը չունի: Նշանադրութեանը իսկոյն հետևում է հարսանիքի «կերուխումը», որից յետոյ նորահարսը և փեսան մեկուսանում են: Պսակը կատարւած է: Այդպիսով սերմն, հոտենտոտ օրիորդը՝ մի առաւօտեան ազատ էակ էր, մի քանի ժամից յետոյ յանկարծ կարող է մտնել նոր և ծանր կեանքի ասպարէզ:

Բուրերի մէջ գուգաւորուող երիտասարդները բազմը տնօրինում են ծնօղիները: Հարսանեկան գնացքը սկսւում է ձիաւոր հարսնաւորներով, որոնք ամեն կերպ աշխատում են աւելի շէք տալ իրենց արտաքին արդ ու զարդով:

Փեսան և հարսը կարող են տեսնել միմեանց այն դէպքում, երբ ընտանիքի անդամները մեկուսանում են: Երկար ժամանակ փեսացուն և հարսնացուն յայտնի ամօթխածութեամբ գլուխ կոր նստում են միմեանց կից կողքի և լռած նայում են գետնին: Վերջապէս փեսան հաղիւ հազ, դտնում է մի ելք՝ այդ տարօրինակ դրութիւնից ազատելու. ուստի դառնալով հարսնացուին հարցնում է, «Ձեռ կամենայ, որ մեր հօտերը արածէին միասին»: Այս բաւական է արդէն, մի ներքին խուլ՝ բայց սիրային հոսանք առաջացնելու մատող գուգաւորողների մէջ: Համբոյր կամ ձեռքերի սեղմումն՝ ընդունւած չէ բուրերի նշանադրողների մէջ, չընայած, որ փեսային ըստ ընդունւած սովորութեամբ՝ 3 օր պահում են աներոջ տանը: Բուրերի պարզ և համեստ նիստ ու կացի հետևանքն է նաև այն, որ հարս գնացող օրիորդը՝

բացի մի քանի թեթև ընծաներից՝ թանկագին նւէրներ և կամ հարուստ բաժինը չի տանում իւր հետ:

Պսակադրութեան հագուստներն անգամ, նոքա վերցնում են կարճ ժամանակով՝ դրա համար յատուկ գոյութիւն ունեցող լոմբարտից: Առաջի գշերը ամուսնացածները անցկացնում են երկանիւ մեծ սայլակի մէջ և այնուհետև ընտանիքի ընդհանուր ննջարանում:

Նորահարսը մինչև երեխայի մայր դառնալը տան մէջ ծառայում է իբրև աղախին: Մայր դառնալով, նա մի կերպ հանում է ինքնուրոյնութեան: Միով բանիւ, բուրերի մէջ, ընտանեկան կեանքում, օրիորդի կեանքը խիստ դժւար է: Նորա մանկութիւնը առանց ուրախութեան է: Երիտասարդութիւնը առանց սիրոյ, իսկ պսակը առանց դրաւիչ քընքընութեան,

Քաֆրների մէջ ընդունւած է բազմակնութիւնը: Հին օրերից սկսած պահպանւում է այն ըստ նիւթական կարութեան: Հարս առնելը կախւած է հօր համաձայնութիւնից և այն խոստացած և ընդունւած գումարից, որը ընդհանրապէս տրւում է հարսի հօրը՝ հարսնախօսութեան ժամին: Եթէ պատահում են մի քանի փեսացուներ և իւրաքանչիւրը համաձայն է տալու այնքան գումար, որքան հարսի հայրն է նշանակում, այդ դէպքում միայն հայրը իւր անեկանելի դրութիւնից դուրս գալու համար, հարցնում է իւր ազգկայ համաձայնութիւնը, թէ որին է ուզում գնալ ու դրանով էլ փակւում է հարսնախօսութեան խնդիրը: Պսակադրութիւնը ոչ մի ծիսակատարութիւն չունի: Փեսայի բարեկամները հարսին տանում են փեսայի տունը, բերում են նւէրներ հարսին, փեսան մի քանի անասուններ է մորթում, կերակրում հիւրերին և դրանով վերջանում է պսակը:

Բէշուանները քաֆրների հարևաններն են: Սրանցում հարսնախօսութեան ձևը համեմատաբար քաֆրների հետ՝ բարդ է: Փեսացուի անձնական առաջարկութիւնը դեռ բաւական չէ նշանախօսութեան համար: Սովորութիւնը պահանջում է, որ հարսնախօսութիւնը կատարուի երկու կողմից և այն էլ միջնորդների միջոցով: Եւ երբ այս ձևով

հարցը գլուխ է գալիս, այն ժամանակ զոքանչը ուղարկում է փեսային լաւ տեսակի ծխախոտ: Հարսնախօսութեան առթիւ գնի մասին երկու կողմից համարեա թէ երկար ու բարակ խօսակցութիւն է լինում՝ մինչև համաձայնութեան գալը: Պէտք է յիշել, որ մինչև համաձայնութեան գալը, հարսնախօսները (փեսայի կողմից) ուտում և խմում են ի հաշիւ փեսայի:

* * *

ԳՂՈՒՍ ԺԹ.

ԳՍՐՈՆԵՁԻ, ԲԱԳԻՐՄ ԵՒ ՏԻՐՈՒՆՆԵՐ

(Բովանդակութիւն).

Հարսանիք. ամուսնացողների տարիքը. քրմի կամայականութիւնը. կախարդութիւն: Կանանց սէրը՝ դէպի պըշրանք: Կախարդական ճար: Բազմակնութեան որոշ չափ: Չիչիս-բէյի և կօնգուիէ: Բագիրմ ցեղ: Բազմակնութիւնը տարածւած: Կնոջ վիճակը որդեծննդից առաջ: Երեք զաւակներ պարզև մօրից ամուսնուն որպէս տրիտուր հօր արած ծախքերի (հարսանիքի ժամանակ): Ամուսնացողների տարիքը: Հինայի գործածութիւնը: Տիրուններ. նշանադրութեան տեղ ժամանակը: Պսակը երգամար և անլուծելի: Սահմանափակ բազմակնութիւն:

* *

Գարոնեղները*) մէջ պսակի ձևը հասարակ է. բայց անդուրեկան վարմունք ցոյց տալ կարող է քուրմը՝ իւր առնելիքի պատճառով: Մեծ երկիւղ են կրում նրա կախարդանքներից թէ փեսան և թէ հարսը: Օրիորդը 10 տարեկանից յետոյ ամուսնանում է. 17 տարեկան հասակում նա արդէն մայր է: 20 տարեկան հասակում՝ ծանր աշխատանքների պատճառով, նա արդէն պառաւի է նմանում: Գարոնեղների օրիորդները և կանայք խիստ սիրում են պշրանք և աշխատում են փայլուն քարերով զարդարել: Այն դէպքում, երբ հարսնացուն չի կամենում այս ինչին գնալ:

*) Գարոնեղները բնակւում են Գարոն և Օգովէ գետերի հովտում, ուղիղ հասարակածի տակ: Ման, Հեղինակի:

քուրմը նրան տալիս է կախարդութեան ճար. ա. լինում է թունաւոր բոյսերից պատրաստւած փոշի, որը խմանում են քաղցը խմիչքի հետ՝ և տալիս են հասնացունի թուլացնելու նրա նեարդերը: Բազմակնութիւնը որոշ չափով է ընդունւած: Հետաքրքիր է և այն, որ գարոնեղ ցեղի մէջ ընդունւած է ունենալ «չիչիս-բէյի», որ նշանակում է ընտանիքի բարեկամ անհատներ: Սրանք կազմում են մի առանձին հաստատութիւն «կօնգուիէ» անունով, որը որոշ չափով առաջն առնում է այր մարդոց վատ արարմունքների դէպքի կանայքը:

Բագիրմների (Սուդանի սարահարթ) մէջ բազմակնութիւնը տարածւած է: Այն կինը, որը իւր ամուսնուն տակաին զաւակ չէ պարգևել, նրան կարելի է արձակել և կամ վաճառել ուրիշին: Մի այլ կողմից, եթէ կինը եղած է 3 զաւակի մայր, նրան կարելի է ըստ իւր ցանկութեան վերադառնալ դէպի իւր ծնողները և նոցա մօտ մշտապէս ապրել: Այդ 3 զաւակները՝ հայրը համարում է փոխատու տուրք կամ պարգև իւր հարսանեկան ծախքերի փոխարէն և այն պարգևների, եթէ տւած է իւր կնոջը հարսանիքից առաջ: Օրիորդները ամուսնանում են 9—10 տ. հասակում: Քսան տարեկան հասակում բագիրմ կանայք սպիտակահեր են և այն ծածկելու համար, հինայով ներկում են իւրեանց մազերը:

Տիրունների մէջ նշանադրեալ օրիորդը մնում է առանց պսակի՝ մինչև այն ժամանակ՝ երբ փեսան ապրուստի միջոց է ձեռք բերում: Պսակը կատարւում է «երգման» խոստումով և համարւում է անլուծանելի: Փեսայի մահից յետոյ, հարսը մնում է ամուրի եղբորը: Պսակը իւր ծէսով և ձեռով նման է արաբների պսակին: Բազմակնութիւնը շատ սահմանափակ է տիրունների մէջ:

* * *

ԳՂՈՒՍ Ի.

Նեղոսի շրջապատի եւ Միջերկրկան ծովափ. բնակիչներ. ԱՔԷՏՆԵՐ, ԲԵՐԲԵՐՆԵՐ ԵՒ ՍԱՐՈՎՔՕՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ.

(Բովանդակութիւն)

Մօնօֆիզիտ հարէչներ: Ութ տարեկան աղջիկը հարս-

նացու: Հարսնախօսութեան տևողութիւնը, փեսայի յարաբերութիւնը ապագայ աներոջ տնեցիների հետ: «Արկեր», հարսանիքի նախերգանքը և պարզևի կորզում, հացկերոյթ: Հարսի ընդունելութիւնը: Արկերները աներոջ տանը: Դիմաւորումն փեսայի, փեսայի դրութիւնը, քահանայի հարց ու փորձը, թաշկինակների փոխանակումն, հարսը արկերների մօտ և եղբայրական յարաբերութեան երգում: Բէրբէրներ կամ տարգիներ: Ամուսնացողների տարիքը: Ամուսնալուծումն և կնոջ ապահովելու խնդիր: Բենի-ումիա: Մարօկքօ: Միակնութիւնը ընդունւած ձև: Ծնօղիների կամքը պատկազրութեան նկատմամբ, արդ ու դարդի նւէրներ:

* * *

Հարէշների մեծամասնութիւնը քրիստոնեաներ են (մօնօֆիզիտներ): Աղջիկը երբ արդէն 8 տարեկան դարձաւ, նա համարւում է հարսնացու: Հարսնախօսութիւնը տևում է նոյն իսկ ամիսներ, և այդ ժամանակամիջոցում փեսացուն միշտ լինում է իւր ապագայ աներոջ տանը, տանում է նւէրներ, բայց և ոչ մի անգամ թոյլատրելի չէ նրան առանձնապէս տեսնելու իւր ապագայ կնոջ հրեսը: Հարսնաւորների մէջ ամենայարգելի հիւրեր համարւում են փեսայի սրտակիցները, որոնք կոչւում են «արկեր» և լինում են թեով մինչև 8-ը: Նախ քան հարսանիքի հանդէսը և կարգը՝ մի երկու օր անաջ այդ 8 հոգու խումբը սկսում է նւագածութեամբ իւր քէֆերը: Սոքա հերթով կանգնում են փեսայի դրացիների դրանը և սկսում են նւագել տալ, մինչև դրացիներից կորզում են մի պարզև: Չուողները ենթարկւում են անխնայ հալածանքի և թալանի: Առաջի օրը՝ հարսանեկան հացկերոյթը տալիս է հարսնացուի հայրը: Ծաշկերոյթի ժամին մտնում է հարսը նւագածութեամբ: Հանդիսականները յոտնկայս ընդունում են նրան: Կառավարող երիտասարդը փայտը ձեռին սկսում է դուրս անել տուն մտած կողմնակի մարդկանց: Մնում են հրաւիրւածները, որոնք հարսի գլխին ձեռք դնելով, մազթում են նրան ապագայ բարիք: Եւ երբ հարսը իւր պատուաւոր տեղն է բռնում, սկսւում է պարը:

Երկրորդ օրը, արդէն փեսայի դուրս դալու և ուրախութեան օրն է: Շրջապատւած իւր «արկերով» և հարսնաւորներով հանդիսաւոր կերպով գնում է աներոջ տուն: Աները դիմաւորում է փեսային և տանելով տուն՝ նստացնում է պատուաւոր տեղը, սկսւում է ուրախութիւն—կեր ու խում: Փեսան այդ ժամանակ նստում է անոնց տեղից շարժւելու և բերանն ու քիթը ծածկում է երկայն վարչամակով: Ոտների հանդէպ նստուում են մօտիկ ազգականներ և ծանօթներ: «Կեր ու խումից» յետոյ, դուրս են բերում հարսին երեսը ծածկած և տանում են այն տեղ, ուր նրան փեսան ապաստում է: Քահանան երբ հարցնում է փեսային թէ արդեօք նա կամենում է իսկապէս ամուսնանալ իւր այդ նշանադրեալի հետ և երբ ստացւում է «այո» պատասխանը, փեսան տալիս է իւր ձեռքի թաշկինակը հարսնացուին և ստանում նրա թաշկինակը: Յետոյ, փեսան հարսի թևից բռնած՝ տանում է նրան դուրս՝ և թողնում իւր սրտակից բարեկամների մէջ և ինքը վերադառնում դէպի հրաւիրեալները ուրախութիւնը շարունակելու և պարզևներ ընդունելու: Երկու օրից յետոյ «արկերը» գալիս են և բռնելով ձեռքերին թաշկինակ, երդւում են մշտապէս եղբայրական յարաբերութիւն ունենալ նորահարսի հետ, մինչև իսկ խնամել նրան, եթէ երբ և իցէ վերջինս կարիքի ներքոյ լինի:

ԲԷՐԲԵՐՆԵՐ ԵՒ ԿԱՄ ՏԱՐԳՆԵՐ*).

Չնայած, որ արևելեան բոլոր ազգերի մէջ ընդունւած է տղայ և աղջիկ ամուսնացնել 10—17 տարեկան, այն ինչ բէրբէրների մէջ ընդունւած է տղամարդուն 30 տարին, իսկ օրիորդին 20, որից յետոյ նոր հնարաւոր է պսակելու եւ թէև պատահում են դէպքեր, որ բէրբէրը կարող է արձակել կնոջը, սակայն նա կարող է երկրորդ կին առնել այն ժամանակ, երբ առաջին կնոջը ապահովեցրած լինի: Սոցանում խիստ հետաքրքրականը այն է, որ կինը՝ ունի օրինական այնպիսի իրաւունք, որով նա է միակ ժառանգու-

*) Տարգիները հիւսիսային Աֆրիկայումն են ապրում, սոքա սակել շուտ թափառականներ են, քան թէ նստակեացներ: Մ. Հեդ.:

Թեան տէրը և ժառանգութիւնը նրանից է հաշուում: Այդ օրէնքը կոչւում է «բենի-նումիա»:

Մարտիքոյի բնակիչներէ մէջ «միակնութիւնը» միակ ընդունեալ ձևն է: Մինչև իսկ տեղական արարներն անգամ պահպանում են այդ կանոնը: Պսակը կատարեալ է, երբ ամուսնացողների ծնօղները փոխադարձ պայմաններով համաձայնում են: Երես ծածկելու սովորութիւնը Մարտիքոյում չկայ: Չկայ նաև հարսնեգին. այլ միայն այնքան փող, որով աներն իւր աղջկայ ձեռքով նւէրներ ու արդ ու զարդեր է պատրաստել տալիս փեսայի համար և փեսայի բարեկամ ծանօթներին:



ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ԵԿԵՂԵՑԻՆ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴՐՈՒՄ.

ԳԼՈՒԽ Ա.

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.

Չեւական օրինական.

1.

Կրօնական կուլտի զարգացումից յետոյ, երբ մարդկութեան մի բաժինը «Միաստուածեան» քրիստոնէական դաւանանքով սկսեց ապրել, իւրաքանչիւր քրիստոնեայ ազգի մէջ սեփնական եկեղեցու գոյութիւնը առաջ եկաւ, որի կէտ նպատակը լինելու էր Փրկչի վարդապետութիւնը տարածել և պահպանել իբրև մի «եղկնային աւանդ»: Եւ քրիստոնէութիւնը իբրև փոխադարձ սիրոյ վարդապետութիւն. պէտք է որ ընդգրկէր ամբողջ մարդկութիւնը ընկերավարական կեանքը՝ գիտական ու կուլտուրական բարիքներով մարդուն պիտի կանգնեցնէր իւր գոյութեան կէտ նպատակի շուրջը. սակայն քրիստոնէութիւնը այդ ցանկաւ լի նպատակին չհասաւ նրա համար, որովհետև իւրաքանչիւր «նոր քրիստոնեայ» ազգ և եկեղեցի այդ նոր ուսմունքը ծառայեցրեց իւր ազգի քաղաքական նպատակների համար. և զրո համար էլ «փոխադարձ սիրոյ» ուսմունքը ատելութեան վերածեց և եկեղեցին՝ աթոռակալ իշխանութեան դրօշակ պարզելով «երկրային» իշխանութեանց տենչարան դարձաւ:

Թունաւոր և կրօնական մոլեռանդ կռիւր իբրև մի անխուսափելի չարիք՝ նա տեղի ունեցաւ դժոխային մե-

ծութեամբ և դիւակաւն բոլոր կարողութեամբ: Այս արդէն յայտնի է ազգերի կրօնական և քաղաքական պատմութիւնից: Եկեղեցին իւր այս «իշխանական» ձգտմամբ մի կողմից իրեն վերապահեց իւր հաւատացեալներին հոգեկան ձգտումներին ուղղութիւն տալու իշխանութիւնը՝ իսկ մի այլ կողմից՝ նա տէր և տնօրէն դարձաւ այդ նոյն հաւատացեալ մարդու կենսական աւելի կշիռ ունեցող մի խնդրի, մօտեցրեց այն իւր հիմնարկութեան զազափարին՝ տալով նրան բարոյական իմաստի միմի «յն ձևականը: Դա՛ «ամուսնութեան» կամ կենսակցութեան իմտիրն էր, որ այժմ թէ Արևելեան՝ և թէ Արևմտեան եկեղեցիներին կողմից համարուած է «խորհուրդ» եկեղեցու: Այսպէս՝ նա այժմ համարուում է եկեղեցու իրաւասու եան մի «ներքին» խնդրի:

Մենք կջանանք ընթերցող հասարակութեան պարզել թէ որչափ «իրաւացի» է եկեղեցու այդ տեսակէտը պատկազրութեան վերաբերմամբ, օգտակար է այն հաւատացեալ ժողովրդականների կենսական պայմաններին և վերջապէս տուժում են մարդիկ «եկեղեցու» ընդգծած խորհրդի անբնական կիրառութիւնից թէ ոչ:

II.

Քանի դեռ Փրկչի վարդապետութիւնը անդամահատութեան չէր ընթարկուել, ամուսնութիւնը բնական կարճ ճանապարհով է տեղի ունեցել: Սակայն երբ քրիստոնէութիւնը կզդիացաւ, Արևելեան և Արևմտեան եկեղեցիք ըսկսեցին դիմել և շտապեցին իւրաքանչիւրը իւր սահմանում կենդրոնանալ: Ամուսնական խնդիրը՝ թէև ուշ՝ բայց և այնպէս երկար ու ձիգ ժողովներով նոքա սկսեցին կարգաւորել: Այնպէս որ քրիստոնէութեան Ա. դարում դեռ ոչ մի եկեղեցի «ծիսարանի» գերի չէ եղել և յիշատակութիւն անգամ չկայ եղել պսակի խորհրդի մասին, որ իսկապէս «պսակն է խորհուրդ» եկեղեցու: Սրան ապացոյց այն, որ կաթոլիկ եկեղեցին Լիօնի (1274) թ., Ֆլօրենցիայի (1438) թ. և Տրիդինեան (1545—1563) թ. ժողովներում սկսեց

ամուսնութեան խորհուրդը կարգաւորել՝ համարելով այն՝ խորհուրդ եկեղեցու:

Հոռմէական յայտնի աստուածաբաններից Թովմաս, Բօնավենտուր XII-որդ և XIII-որդ դարերում, նոքա ևս չեն յիշատակում, որ պսակը է խորհուրդ եկեղեցու:

Առաքելական հայ-եկեղեցին՝ թէև մի քիչ աւելի կանուխ է ի նկատի ունեցել ամուսնական խնդիրը, ինչպէս այդ երևում է Ա. և Բ-րդ խումբ առաքելոց պատւէրներից, սակայն նա ևս կարգաւորում է պսակի խորհուրդը և համարում «խորհուրդ եկեղեցու» Աշտիշատի՝ (365), Շահապիվանի (447), Պարտաւի (771) և Սսի (1243) թ. ժողովներով:

Յունաստանում եկեղեցու միջոցով պսակը առաջի անգամ տեղի է ունեցել Լեւոն Իմաստասէրի գահակալութեան ժամանակ (886—919 թ.):

Բողոքական եկեղեցին՝ թէև ընդունում է պսակադրութիւնը իբրև անհրաժեշտ պայման, բայց նա հրաժարուում է ընդունել այն իբրև խորհուրդ եկեղեցու:

Ռուս եկեղեցու օրէնքների ժողովածուից (Кормчая книга) երևում է, որ նա XVIII-րդ դարում միայն կարողացել է ուղղութիւն առնել պսակադրութեան խորհրդին՝ սահմանելով հասունութեան տարիք տղային 15, աղջկան 13. բայց այն ևս 1830 թ. բարձրագոյն հրամանով վերափոխուում է՝ ընդունելով փեսացւի տարիքը 18՝ իսկ հարսացւինը՝ 16: Մի խօսքով՝ որքան շուտ և որքան ուշ, բայց և այնպէս եկեղեցու սահմանած պսակադրութիւնը՝ տեղի է պատմութեան դատաստանին այնպիսի նմուշներ, որոնք վերլուծում են և պարզում, որ իրօք «եկեղեցական պսակադրութիւնը» տնտեսական ծանր վիճակ ստեղծելով անցեալում՝ նա անփոփոխ կեցած է ներկայումս և կհնայ ապագայի նկատմամբ, եթէ նա չենթարկւի բարեփոխութեան:

Անցեալի պատմական դէպքերն սոքա են: Ա. շնորհիւ «եկեղեցական» պսակադրութեան անազին ծախքերի՝ Անգլիայում՝ դեռ Կարլոս II-ից առաջ՝ պսակը կատարուելիս է եղել «հիւրանոցներում» և մինչև իսկ «բանդերում».

յայտնի Դժժն-Սինգեմ՝ իւր 30 տարուայ բանդարկութեան ժամանակաշրջանում 3600 զոյգ պսակ էր կատարել, որ կոչւելիս է եղել «Fleet mariages». Կարլոս II-րդ՝ երբ դահ է բարձրանում՝ նա այդ գաղտնի պսակադրութիւնը արգելում է 1653 թ. յունիսի 6-ի օրէնքով:

Երկրորդ՝ Փրանսիայում՝ մինչև 1787 թ. օրէնքը, բողոքական քարոզիչներին ձեռքով պսակը կատարել է «բանձաններում» և «անտառներում», որից և ստացել է «Mariages de desert» (անապատի պսակ) անունը: Երրորդ՝ հայերի մէջ՝ XVII-րդ դարում սկսւում է թոնգրակեցիների ազանդը, որից երևում է, որ յիշեալ ազանդաւորները պսակադրութիւնը կատարել են թոնրի շուրջը: Եւ ի լրումն այս ամենի, բոլոր քրիստոնեայ և լուսամիտ եւրոպական պետութիւնները գոհ չլինելով «եկեղեցու» անսահման իշխանութեան ճիգերից և պսակադրութեան իրաւաբանական անճշտութիւնից, հրատարակեցին «քաղաքացիական» ամուսնութեան օրէնք, որը տեղի է ունենալու առանց «եկեղեցու» միջամտութեան:

Անս թէ որպիսի արդիւնք ձեռք բերեց «եկեղեցին» շնորհիւ իւր «ձևական և ծիսական» արարողութեանց: Այժմ տեսնենք թէ որքան ընկալան և իրաւաբանական է «եկեղեցու» սահմանադիր կանոնը կենակցութեան կամ պսակադրութեան խորհրդի վերաբերմամբ:

III.

Եկեղեցին սահմանել է և դաւանել է ապրիս, որ պսակը լինելով մի սրբազան խորհուրդ հանդերձ արարողութեամբ, նա պիտի կատարւի միմիայն «եկեղեցու» ըստ սահմանեալ ծիսի, որը կրօնական ակա է դառնում այն ժամանակ, երբ քահանան եկեղեցում պսակի խորհուրդը կատարելուց յետոյ՝ վկայից ներկայութեամբ ժապաւինեալ մատենաւում արձանագրում է իրողութիւնը: Եկեղեցին յուսադրում է այդպիսիներին տալու «անթառամելի պսակ» և ուշադրութեան արժանին այն է, որ «եկեղեցին» միայն իւր

կարգաւորած պսակն է համարում օրինաւոր և սուրբ. իսկ եկեղեցուց դուրս տեղի ունեցած պսակը է ապօրինի և անսուրբ:

Հայոց եկեղեցին 1904 թ. նորից յայտարարեց թէ. նոքա՝ ուլքեր առանց եկեղեցու սահմանած օրէնքի կենակցում են, այդպիսիք զրկւում են «սուրբ հաղորդութիւն ընդունելուց» և մեռնելուց յետոյ էլ զրկւում են քրիստոնէին վայել աղօթանէր թաղումից: Նոյն տեսակէտը և տրամադրութիւնը ունին կաթոլիկ և յունաղաւան եկեղեցիք. բայց իրաւագիտութիւնը գալիս է մատնանիշ անելու «եկեղեցու» այդ չափազանց նեղ տեսակէտը և ասում է. «Այն, կենակցութիւնը մի շատ բարդ և մի վերին աստիճանի պատասխանատու, կատարեալ բնական և նոյն իսկ աստուածային մի պահանջ է, որը կատարումն է աւնում միմիայն այն ժամին, երբ երկու սիրող սրտեր միմեանց վերջնական խօսք տւեցին կենակցելու, խնդիրն առանց քահանայի, սարկաւազի և տիրացուի, վերջացած է»: Այդպիսով ևս ակն յայտնի եղաւ, որ պսակը ըստ էութեան լինելով բնական և բարոյական կապ՝ բնական ձևով ևս պիտի կատարումն առնէ այն: Բայց թէ կենսական խորիմաստ հարցում կենակցութիւնը որպիսի իրաւագիտական նշանակութիւն ունի, մենք առաջ ենք բերում ստորև հետևեալ քաղաածքները:

Հուովմի իրաւագիտութեան ականաւոր ներկայացուցիչ Մօտեստին՝ III-րդ դարում, պսակի նշանակութիւնը որոշելիս՝ ասել է. «Պսակն է մարդու և կնոջ ամբողջ կեանքի և միաւորութեան կապակցութիւնը և աստուածային և մարդկային իրաւունքների յարաբերութիւնը»:

Արնոտ՝ ասած է. «Պսակը է իրաւաբանական ճանաչւած կապ՝ այր և կին մարդկանց լիովին կենսական յարաբերութիւնների համար»:

Պրուսական օրէնքներում՝ պսակի վերաբերմամբ ասած է. «Պսակուելու գլխաւոր նպատակն է որդիք յարուցանել և կրթել»:

Աւստրիական օրէնքների ժողովածուի մէջ՝ պսակի հիմնական գաղափարը այսպէս է որոշւած:

«Երկու զուգակից անձան կամքի և օրինական արտայայտութիւնը լինելու է այն բանում, որ նոքա ապրեն անքակտելի միութեամբ, ծնեն զաւակներ, կրթին նրանց և ցոյց տան միմեանց փոխադարձ օգնութիւն»:

Բաւարիայի օրէնքներում՝ այսպէս.

«Պսակադրութիւնը է այն կապը, որով կապուած են այր և կին՝ զաւակ ունենալու և կրթելու համար»:

Փրանսիական օրէնքների ժողովածուի (codecivil) մէջ մուծուած է հետեւեալ օրինակելի որոշումը: «Պսակն է մարդու և կնոջ կենսական յարաբերութեան այն կապը, որի կապակցութեամբ յարատեւելու է մարդկային ցեղը և փոխադարձ օգնութեամբ տանելու են կեանքի ծանրութիւնը»:

Իտալական, Սաքսոնիայի և Բալտեան կամ Օտզէյեան նահանգի, նմանապէս ուստական օրէնքների տրամադրութիւնը նոյնն է: Ուրեմն՝ իրաւունքի տեսակէտով ևս՝ կենակցութիւնը լինելով երկու զուգաւորուզների փոխադարձ համաձայնութեան արգասիք, միանգամայն անբնական է և խիստ օտարոտի, երբ այդպիսի մի ներքին խնդրում «եկեղեցին» միջամտում է և այն էլ որպիս զրկանքներով՝ մենք այդ կտեսնենք աստիճանաբար:

IV.

Եկեղեցին պսակադրութեան կանոն սահմանելիս՝ պէտք է ասել, որ նա նախ լրացունիչ կանոն չէ տւել և որ գըլխաւորն է, չէ ընդգրկել կենակցութեան լուրջ և պատասխանատու վիճակը: Կինը՝ իբրև մայր, իբրև էութիւն, որ նոյն բարեխնամ վերաբերմանը պիտ արժանանար «եկեղեցու» կողմից նոյնպէս՝ ինչպէս տղամարդը, նա համարեա թէ արգահատելի է «եկեղեցու» աչքում: Օրինակը բերենք Առաքելական հայ եկեղեցու ընդունած պսակադրութեան կանոններից:

Օրինակ՝ Բարսեղ Մեծի 21-րդ կանոնը, որը վերաբերում է անտաակ ամուսինների պատժական դործին, այս է թելադրում: «Բայց անտաակութիւն անողը՝ (տղամարդը)

չի բաժանում իր կնոջ կենակցութիւնից. և կինը պարտաւոր է ընդունել և պահել իր մարդուն, որը դարձել է անտաակութիւնից. բայց տղամարդ ամուսինը՝ իւր պղղուած կնոջը դուրս է անում տնից: Սրա պատճառը և բացատրութիւն տալը հեշտ չէ. բայց և այնպէս ընդունուած է սովորութեամբ»: Նոյն բարհալած օրէնքի տրամադրութիւնը դեռ աւելի ծանր կերպով ունին կաթողիկ և յուսադաւան եկեղեցիք կնոջ նկատմամբ:

Սրանից անկախ՝ նկատելի է նաև այն, որ Արևելեան եկեղեցին հոգեկան և մտաւոր կարողութիւնից զուրկ անձանց համար պսակադրութեան արգելադրութեան չէ սահմանել. ուստի նա ներկայիս ղեկավարում է աշխարհիկ իշխանութեան օրէնքով: Այս խնդրում միմիայն բողոքական եկեղեցին ունի որոշ կանոն, որով հոգեկան կարողութիւնից զուրկ անհատներ զրկուած են պսակադրութիւնից: Մի կողմից եկեղեցին ընդունում է, որ պսակադրութեան խնդրում՝ փեսան և հարսը պէտք է լինին անկախ և ազատ *). բայց միւս կողմից էլ տեսնում ենք, որ թէ փեսացուն և թէ հարսնացուն՝ առանց ծնօղների համաձայնութեան չեն կարող ամուսնանալ:

Աւետարանական բողոքական եկեղեցու կանոնով, ծնօղները միայն պիտի հսկեն, որ անչափահասութեան դէպքում պսակ չլինի. իսկ եթէ չափահասները երբեմն դիմում են ծնօղների կամքին, դա միայն պարզ յարգանաց նշան է:

Եկեղեցին չէ կամեցել ի նկատի առնել, որ 3-րդ. 4-րդ և դուցէ 5—8-րդից աւելի անգամ պսակադրութիւնը կարող է նոյնքան բնական և անհրաժեշտ լինել, որքան և առաջի կամ անդրանիկ կոչուած պսակադրութիւնը, բայց թէ ինչո՞ւ և որպիսի՞ համոզիչ բարոյագիտական պատճառաբանութեամբ է դրել այդ արգելքը՝ դա յայտնի չէ: Միայն մի բան, և այդ է այն, որ եկեղեցուն աջակից հանդի-

*) Ռուսական աշխարհիկ օրէնքը ընդունում է եկեղեցու այդ տեսակէտը և պաշտպանում է այն սկզբունքով, չունենալով պատժական յօդուած:

սանալով աշխարհիկ պետական իրաւունքը՝ 4-րդ անգամ պատկազրութիւնը արգելւած են համարում: Դա Աբեհելեան եկեղեցին է՝ որ աջակից ունի ոուս աշխարհիկ օրէնքը:

Առաքելական հայ եկեղեցու կանոնական գործում տեսնում ենք ընդհանուր բաներից յետոյ 3-րդ պատկազրութիւնը համարւած «շնութիւն» և «պղծագործութիւն». և 3-րդ պատկ կատարող քահանան կարգ ընկէց լինելու: Դա 771 թ. Պարտաւի 13-րդ կանոնի որոշումն է, որ կարօտ է իսկական լայն բացատրութեան:

V.

^{համ} Ժամակի և հանգամանքների խաղալիք է «ճիւղագրութեան» կամ «պորտաբաժանութեան», հասի ու չհասի խնդիրը: Օրինակ՝ Աբեհելեան եկեղեցու կանոնը՝ որը մտել է նաև ոուս եկեղեցու կանոնական ժողովածուի մէջ, (Кормчая книга) կենսակցելը արգելւում է ցեղակիցների մէջ ց' 7-րդ աստիճանը: Բայց յետագայ ժամանակով փոխւեց այսպէս: Ազգականների մէջ՝ 5-րդ պորտը կամ աստիճանը՝ անպայման արգելւում է, իսկ 6-րդ պորտը՝ համարել պայմանական: Խնամէութեան ղէպըւում՝ 4-րդ և 5-րդ աստիճանները պայմանական՝ իսկ 3-րդը՝ անպայման արգելւած:

Բողոքական եկեղեցին միմիայն հարազատ և ուղիղ մերձաւորների կենսակցութիւնը արգելում է. իսկ խնամէութեան չհասութիւնը ց' 3-րդ աստիճանը:

Հռովմէական կաթոլիկ եկեղեցին միջին դարերում, ասկետական շրջանի ազդեցութեան ներքոյ թոյլատրելի համարեց թէ ազգականութեան և թէ խնամէութեան 7-րդ աստիճանները. բայց Դնովկենտրոս III-րդ պապը, Լատներանի 4-րդ ժողովում (1213) թ. մեղմացրեց այդ խստութիւնը՝ վերածելով մինչև 4-րդ աստիճանի թոյլաւութեան: Սակայն ներկայիս, ազգականների մէջ արգելւում է 4-րդ աստիճանի մօտիկութիւնը, իսկ խնամէութեան 4-րդ պորտը մնաց թոյլատրելի:

Որգեգրների վերաբերմամբ եղած 6-րդ աստիճանը՝ ըստ Արևմտեան եկեղեցու օրինաց արգելւում է. և այդ արգելքը կարող է տեւել մինչև այն օրը, երբ կվերջանայ որգեգրութեան թէ կարգի և թէ կանոնի ժամանակը:

Նոյն օրէնքը անփոփոխ գործադրւում է նաև հոգևոր ազգականների, այն է խաչեղբօր, սանամօր կամ սանահօր, կնքահօր և կնքամօր վերաբերմամբ նոյն ձևով և ժամանակամիջոցով, բայց և այնպէս, այս և հոգևոր իշխանութեան (диспенсация) թոյլաւութեամբ է լինելու:

Հայ եկեղեցին 1899 թ. յունիսի 30-ին, թ. 977 կաթողիկոսական կոնդակով (Մկրտիչ Առաջին) հոգևոր ազգակցութեան վերաբերմամբ նշանակեց երեք—ծնունդ հեռաւորութեան. այսինքն՝ Սանիկը չի կարող առնել կնքահօր որդուն. բայց կնքահօր եղբայրը՝ կարող է առնել եղբօր զրկած սանիկին:

Յունական եկեղեցին՝ կնքահայրութեան 6--7-րդ աստիճանները պահում է, որպէս արգելաւիթ կենսակցութեան:

Այս ընդհանուր թերի՝ և երբեմնակի հակասական ձեւակերպութիւններից յետոյ, մատնանիշ ենք անում «եկեղեցու» մի այլ անրնական և համարեա կիսով չափ «ինքնասպանութիւն» պատճառող մի այլ երևոյթ, որ 1500 տարի է, ինչ հանդիսացել է սև ճակատագիր եկեղեցական նւիրական կոչումն ունեցող դասակարգի համար: Դա է կենսակցութեան արգելումը կոյսերի, աւազ-սարկաւազների, վարդապետների, եպիսկոպոսների և կաթողիկոսի վերաբերմամբ: Կրկնամուսնութիւնից զրկւում են նաև քահանայք: Նկատելով այս, ակամայից յիշում եմ Հիւսիսային Ամերիկայի շէկկեր ցեղի «բիրիակաւն—կօմմոնիստ» ազանդաւորների դաւանանքը: Դրցա մայրեպետ Աննա Լի՝ քարոզելիս է եղել այն, թէ «Աղամի և Եւայի յանցանքը կալանում է պատկի մէջ. և թէ երկիրը՝ մեղքը պահելով տեւ է այն մարդուն. ուստի պէտք է աշխատել մարդկային ցեղը ազատել աննպատակ կենսակցութիւնից»:

Մի կողմից դուք լսում էք «եկեղեցում» Աստուծոյ

օրհնութեան ձայնը մարդուն ուղղած թէ. «Աճեցէք և բազմացէք, տիրէք երկրին» մի այլ կողմից անեցողութիւնը, գուգաւորութեան բնական ընթացքը «եկեղեցին» կանգնեցնում է՝ համարելով այն «նւիրական-վսեմ» կոչում. հարկաւ սա մի զգալի թիւրիմացութիւն է, դարերի անգէտ սովորութիւն, որը թէև առանց էական պատճառաբանութեան, այնուամենայնիւ նա մնացել է «եկեղեցական կանոն»: Բացատրելու կարիք թող չլինի՝ եթէ աւելացնենք, որ «եկեղեցին» արգելելով կենսակցութիւնը իւր ուխտապահները վերաբերմամբ «կիսամորթ» դրութեան ներքոյ է թողել նոցա, զրկելով կենսունակ լինելու բոլոր բարեմասնութիւններէ: Ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Ա. կաթողիկոսը բազմիցս նկատողութիւններ անելիս Միաճնա-էջ տաճարում. վանականներին կ'ձայներ. «ծօ ապուշներ»: Եւ արդարև վանականութեան տաղտուկ մթնօլորդը՝ ~~և ստորագրող~~ ~~պարտաւոր~~ ~~պարտաւոր~~ ~~պարտաւոր~~ բայի ապշութիւնից և ծուլութիւնից աւելի ոչինչ կարէ տալ: Բայց եթէ կան եղել անհատներ,*) որոնք իւրեանց կեանքն ու գիտակցութիւնը վարձկանների վիճակում չեն գտել, այդպիսիք թողել են և անպայման կ'թողնեն «կուսակրօն» համարած մահաբեր կեանքը՝ փրկութիւն գտնելով իրական կեանքում:

Թէ «եկեղեցին» որպիսի դրութիւն է ստեղծել «կուսակրօն»-ների և կամ կրկնամուսնութիւնից զրկող այրիացած քահանաների համար, մենք շատերից միայն մի երկուսը իբրև նմուշ կտանք պիտակից ընթերցողին: Առաջինը՝ էջմիածնի միաբան Սմբատ սարկաւազի դրութիւնն է Ղրիմի ս. խաչից, ուր 1905 թ. Գէորգեան ձեմարանի իւր ուսուցչական արձակուրդներին հանգստանում էր:

«Սիրելի Տէր Ներսէս»!

«Նամակդ ստացայ. մինչև յուսահատութիւն ինձ դար-

*) Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Մայրազոյն Պատրիարքի օրով էջմիածնի կուսակրօն միաբան սարկաւազներից և վարդապետներից 7 հոգի՝ 4-ը սարկաւազներ, Գրիգոր, Կոստանդին, Պօղոս և Սմբատ, 3-ը վարդապետներ, Եղնիկ, Մաշտոց և Թովմա կամովին հեռացան միայնակեցութիւնից չհաշուելով այդ նեղ վիճակի հետ:

մացրեց քո հայեացքը. միթէ՞ չհասկացար ինձ: Կարծում ես արդեօք որ իմ անելիք քայլս բոլորական յախշատակութեան արդիւնք է: Ո՛չ և դարձեալ ո՛չ: Տարիներով ես աշխատել եմ խեղդել իմ մէջ այդ ձայնը. բայց տեսնում եմ որ համոզմունքիս հակառակ դնալ չեմ կարող»:*)

«Իմ անելիքս պարզ է և ոչ ոքի կարծիք չի կարող ինձ յետ կանգնեցնել դուրս գալու կեղծ դրութիւնից: Ես ամեն բան ի նկատի ունիմ. պատրաստ եմ տանել ամեն զրկանք... միայն՝... ես ազատուիմ իմ ներքին կուռից...: Ամեն բան չեմ կարող գրել. կգամ շաբաթ օրը և երկար կխօսենք: Միայն յանուն մեր ընկերութեան՝ խնդրում եմ թեթև չհայեա այս խնդրի վերայ. իմ այս հոգեկան ծանր վիճակում յուսով եմ, որ պիտի նպաստէք ինձ ըստ Ձեր կարողութեան»:

«Երևի հեռագիրս ստացած կլինիս և ամեն կասկածանք ու կարծիք կփարատես: Վճիռս անդառնալի է»:

Յարգանք՝ Սմբատ սարկաւազ:
1905 թ. 6 յուլիսի
Ս. Խաչ:

Պատմութիւնը լրիւ լինելու համար կյիշատակենք, որ իրօք Սմբատ սարկաւազը նոյն թիւն մեղ հետ տեսակցելուց յետոյ՝ թողեց ուրարն ու վերարկուն և մտաւ աշխարհիկ կեանք հանգստացնելով իւր խիղճը:

Երկրորդ փաստագիրը՝ մի սրտաճմլիկ նկարագիր է այրիացած ձեմարանական Տաճատ քահանայ Տէր-Վարդանեանի կողմից իւր վաղամեռ երիցունու և մնացած որբուկների նկատմամբ, որ բերում ենք նոյնութեամբ, աւելի ակնյայտնի կացուցանելու տիրող կորստարեր կեանքի պատճառները: Ահա և այն:

*) Յիշեալ ակնարկը վերաբերում է այն ժամանակում ս. Խաչի վանահայր Նահապետ վարդապետ և ապա եպիսկոպոս Նահապետեանին, որը սարկաւազի հետ ծրագրում էին Կովկասի հայոց դպրոցները ծրագրելու Նահապետեանը լինելով ~~պարտաւոր~~ և ուսուցիչ և տեսուչ Գ. ձեմարանում, նորա կարծիքը մեծ գին ունէր էջմիածնում:

«Միրելի Տէր Ներսէս»

«Ձեմ յիշում թէ երբ, միայն յիշում եմ, որ ճալա տեղափոխելու համար քեզ գրել էի. և լսեցի, որ յաջողութեամբս ուրախացել էիր: Միայն գիտես քո ուրախութիւնդ և իմ յաջողութիւնս որչափ տևեց, և բազում ինչ դառն խաղեր արեց ինձ հետ, և ինչպէս կարճ միջոցում իմ բաժին, արեգակը խաւարեցրեց: Յունիսի 27-ի անդառնալի օրը՝ անդարձ խլեց ինձանից թանկանդին կենակիցս և երեք հատ մատող երեխաներս մնացին տառնց խնամող մայրիկի: Ա՛խ, սիրելի ընկեր, սիրտս փշերով լի մի անապատ է դարձել և յուսահատութիւնը թևատարած սաւառնում է հոգւոյս վերայ: Երեք ամիսն լրանում է, որ զիշերն անքուն եմ անցկացնում և ցերեկն անհանգիստ. ահա գշերւայ ժամը 2-է, դուրսը ման գալուց յոգնեցի, ընթերցանութիւնից էլ ձանձրացած, վերցրի նամակս գրելու քեզ: Երեխաներից փոքրը՝ աղջիկ է եւ այժմ ինն ամսական՝ մնացել է առանց խնամողի. մի խնամող բերել, ազատ չեմ կարող մնալ ժողովրդի խօսքերից. իսկ այլ կերպ՝ երեխաներ պահելն՝ անհնար է: Ինձ տանջում է այն, որ մինչև օրս՝ ժողովուրդը ինձ ձանաչած է եղել իբրև պիտանացու և կոչմանը համապատասխան մարդ, բայց հիմայ էլ, չեն ուզում հասկանալ թէ երեխաներն ինչ են պահանջում, կամ մարդից ինչ է պահանջում»:

«Իւրի պայմաններին քաջ ծանօթ ես և շատ օրինակներ ունիս աչքի առաջ. նայեցէք հօրս և թէ խեղճ քահանան ինչպէս տանջւում էր և անւանարկւում: Ի՞նչպէս նորա երկաթի նման առողջ կազմւածքը ֆիզիքապէս քայքայեց: Եւ որովհետև ճակատագիրն ևս ինձ այդ ձանապարհին է կանգնեցրել, հետևապէս նոյնը սպասում է և ինձ»:

«Եղել են դժբաղդիս բազմակից երիտասարդ քահանայք, բայց խեղճերը անարդար մարդկութիւնից հալածելու թքւել են, որոնց յայտնի դոհերն են հոռոմցի (Աղէքսանդրապօլի վիճակ, Երևանի նահ.) Տէր-Սրապիտը՝ և աղէքսանդրապօլցի Գասպարեանց քահանան, որոնք թէև քահանայադրժում են, բայց մինչև այդ՝ աւետարանի հիմնադրի չափ տանջանքներ կրեցին մարդկանցից»:

«Տէր Ներսէս, սիրելիս, եթէ անարդարութեան դէմ ենք կուելու, պիտի յայտնապէս հրապարակ գալ և բողոքել անտոնդի և անօգուտ կարգերի դէմ. բայց ի՞նչ արած, որ այդ ևս ինձ անհնար է: Ես զգում եմ որ այս դրութեան մէջ ամեն կերպ անօր եմ ապրելու և այս բոլորը քեզ՝ իմ բարիքներիս մասին անկեղծօրէն մտածող ազնիւ ընկերիս խոստովանում եմ, որպէս զի մի ճար, մի հնար գտնել, գտնէ կաթնակեր մանուկներիս փրկել: Ներքը ընկեր, որ երկաւրաբանութեամբ գլուխդ ցաւեցնում եմ. բայց զիտե՞ս որ դարդոտ մարդը՝ շատախօս կգառնայ: Այժմ ես Բազրատունեաց մայրաքաղաքի աւերակաց բեկորների մօտ՝ մի աւերակ ունիմ, որի կոյտերի առաջ թափառելով ողբում եմ բազրս, ողբում սև օրս...»:

Վշտահար քո Տաճատ քահ. Տէր-Վարդանեան:
27 սեպտեմբերի 1905 թ.

Ի գիւղն Ճալա (Կարսի շրջան):

Ծանր է վերջապէս շեշտել, որ «եկեղեցի» կոչւած հաստատութիւնը՝ ուր շարունակ լսում է «Մարդ-Աստուծոյ» խորիմաստ խօսքերը թէ. «Եկե՛ք ինձ մօտ, ամեն վաստակածներ եւ բռնաւորներ եւ ես Ձեզ հանգիստ կտամ, որովհետեւ իմ լուծը քաղցրէ՛ եւ իմ բեռը թեթեւ»: Բայց այսօր՝ խղճի և կամբի ազատութեան գործում նա շատ թեթեւ է նայում Փրկչի վարդապետած ուսմունքին. և թւում է թէ «եկեղեցին» ձևականութեանց յետեից ընկնելով զգալի կերպով դէմ է գնում իւր գոյութեանը՝ և իւր նշանաբանին: Եւ արդարեւ՝ եթէ յանկարծ Փրկիչը նորից երևար մարդկային մթնօլորդում, արդեօք նա վշտացած չէ՞ր ասի «ատուութեան դրօշ-քառաթև խաչը ձանաչող աշխարհականին և հոգևորականին. «Վայ Ձեզ, դպիրներ և փարիսեցիներ. կեղծաւորներ, որ անանուխի, և՛ սամիթի, և՛ չամանի տասանորդը տալիս էք, ինչո՞ւ դարձեալ անտես էք առնում օրէնքի պատասխանատու «բաները» — դատաստանը, (իրաւունք յարգելը) և ողորմութիւնը, և հաւատքը. սա պէտք էր կատարել՝ և այն չթողնել»:



Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աշխատութեանս նիւթն ուսումնասիրելիս՝ մենք օգտուել ենք հետեւեալ աղբիւրներին:

1) **Исторія семьи**, сочинение Ю. Липперта, (авторъ исторіи Культуріи) переводъ съ нѣмецкаго Н. Шатерникова. С.-Петербургъ 1897 г.

2) **Женщина** ея жизнь, нравы и общественное положение у всѣхъ народовъ земнаго шара, соч. А. Ф. Швейгеръ-Лерхенфельда, перев. съ нѣмецкаго М. И. Мерцаловой; съ приложеніемъ статіи о русскихъ женщинахъ, состав. В. И. Немировичъ-Данченко. С.-Петербургъ 1885 г.

3) Энциклопедія «Брогаузъ и Ефрона».

Յիշեալ «Հանրագիտակ բառարանից» օգտուելու համար հրատարակաւ շնորհակալութիւն երգւեալ հաւատարմատար արդոյ պ. Յովհաննէս Դուրլիտեանին:

Ն. ք. Հերթեցեան.

Ծ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Բ.

Գուցէ ինձ չյաջողէր սոյն աշխատութիւնս տպագրութեան տալու, եթէ նախօրօք մի քանի տասնեակ օրինակները բաժանորդագնով օգնութեան չհասնէին ինձ մեծապատիւ պարոնայք՝ Բագրատ Պետրոսեան, Կարապետ Աղախանեան, Անտօն Սարգսեան, Պօղոս Հայրապետեան, Մահտեսի Բաղդասար Զէրբէգեան, Յովհաննէս Մաղարեան, Սարգիս Մինասեան, Ստեփաննոս Տէր-Յարութիւնեան (Պօպով), Ստեփաննոս Մոլթանեան և Կարապետ ու Նահապետ եղբարք Արմաղանեանցներ: Խորին շնորհակալութիւնս ազնւամիտ վերոթեւալ անձանց:

Ն. ք. Հերթեցեան.

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր .

Ս Խ Ա Լ Է Ր Կ

Ո Ի Ղ Ղ Ի Ա Ծ

- | | |
|--|---|
| 1) Երես 5, տող 12-րդ
ճնողներին | ճնողներին |
| 2) Երես 6, տող 2-րդ
այտատարելով | յայտարարելով |
| 3) Երես 20, տող 24-րդ
Այդ գեղարում տողը պէտք է իբրև կին խնամէր և ապ-
րէր իւր այլի հարսի հետ: | Այդ գեղարում տողը պէտք է իւր այլի հարսի հետ ապ-
րէր և խնամէր իբրև կին: |
| 4) Երես 29, Կօնֆարեազիւս | Կօնֆարեազիւս |
| 5) Երես 29, peregriniki-
տարուհիներ | օտարուհիներ |
| 6) Երես 31, տող 6-րդ
Բարձր դատակարգի | Բարձր դատակարգի |
| 7) Երես 39, տող 29-րդ
խմայնում են | խմայնում է |
| 8) Դօսն երեսի 34-րդ տող
Պատկը վերագանում է | Պատկանները վերագա-
նում են |
| 9) Երես 41, տող 12-րդ
այնուհետև մօտ բարեկամ-
ներին | ու մօտ բարեկամներին |
| 10) Երես 43, տող 2-րդ
Կովկասում և Անդրկովկա-
սում հայերի մէջ | ընդհանրապէս հայերի մէջ |
| 11) Երես 52, տող 24-րդ
վատ կողմի | վատ կողմը |
| 12) Երես 56, տող տողին
մանեկ ամուսնական լուծ | կրել ամուսնական լուծ |
| 13) Երես 68, տող 13-րդ
էկեղեցու իրաւասուհան | իրաւասութեան |
| 14) Երես 71, տող 28-րդ
Արնոս | Արնոս |

XXV - VIII - XXXII

<< Ազգային գրադարան



NL0233210

50

193
50

55.603

307

Գինն է 60 կոպ.

20 հատ միասին գնողների համար 10% զեղչումն է լինել
Իսկ գիրքը ձեռք բերելու համար՝ կարող են գրմել Тифл
книж. торговля «Гуттенбергъ» և կամ հեղինակին՝ въ
торъ Романовскій (Куб. обл.) священнику Н. Эртевца